Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

5/4102/ 14 հունվարի 2012 շաբաթ

ISSN 1829-2224
11255
9 771829 222003

Ա

## Նորից՝ լեզվի խնդիրը

«Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղը վերջերս այնքան հուզեց ազգիս, որ այսօր այդ խաղի ժամանակ պաշտոնյաների ռուսերեն խոսելու հարցը հաստատ ավելի շատ է քննարկվում մամուլում, քան ղարաբաղյան հիմնախնդիրը: Չեմ պատրաստվում մասնակցել բանավեճին՝ արդյոք օրինակա՞ն է Հայաստանում հաղորդում հեռարձակել ռուսաց լեզվով: Իմ կարծիքով՝ այդ հարցի պատասխանը պետք է տա ՀՌԱՀ-ը, բայց այդ հանձնաժողովի 10 տարվա գործունեության միակ արդյունքը «Ա1+»-ին եթեր չթողնելն է, մնացածը ՀՌԱՀ-ին բացարձակապես չի հուզում:

Բայց եթե նույնիսկ խաղը ռուսաց լեզվով հեռարձակելը օրենքի կոպիտ խախտում է, ապա պետք է, հավանաբար, հաշվի առնել, որ այդ հաղորդումը եթեր է գնում տարին մի քանի անգամ: Իսկ, օրինակ, ռուսերեն կրկնօրինակված արտասահմանյան ֆիլմերը առանց օրենքի պահանջած համընթաց թարգմանության՝ տարբեր ալիքներով ցույց են տրվում ամեն օր, երբեմն օրը մի քանի անգամ, եւ ոչ ոք դրա դեմ, կարծես թե, չի ընդվզում: Եվ քանի որ խոսք գնաց լեզվի մասին, ապա արժե, երեւի, ուշադրություն դարձնել որոշ սերիալների լեզվին, որը իբր հայերեն է, բայց իրականում ժամանակակից ռաբիս «նովոյազ» է (եթե կիրառենք Ջորջ Օրուելի հայտնի վեպում հանդիպած եզրը): Այդ լեզուն գրագետ ռուսերենից հաստատ ավելի վատն է:

Ուզում եմ ասել՝ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղն այն օղակը չէ, որը պիտի շարժի հասարակության հատուկ զայրույթը: Այստեղ ի հայտ են գալիս մեր ժողովրդի, մեղմ ասած, ոչ ամենաանարժան զավակները, որոնք դրսեւորում են իրենց ոչ այնքան վատ հատկանիշները: Այնպես որ, կարելի է մեկ կամ երկու տարի սպասել, մինչեւ որ մեր ներկայացուցիչները բանակցեն խաղի սեփականատերերի հետ եւ, հուսանք, իրավունք ստանան խաղի տեղական փուլերն անցկացնել մեր պետական լեզվով:

Նույն համբերատարությունը ես, օրինակ, չէի դրսեւորի այն հաղորդման հանդեպ, որում հայաստանյան ինչ-որ անհայտ «ջունգլիներից» եկած տղաները երեք կանանց ներկայությամբ փորձում են «կպցնել» իրենց ինտելեկտին միանգամայն համապատասխանող աղջիկներին: Կամ գուցե հակառակը՝ այդ հաղորդման հերոսների լեզուն եւ մտածողությունն ինձ համար չափից դուրս խրթին են:

Ինչ վերաբերում է բուն լեզվին, ապա ինձ թվում է, որ եկել է ժամանակը, երբ, ասենք, մեր հարգարժան քաղաքագետներ Ռիչարդ Կիրակոսյանը ու Ալեքսանդր Իսկանդարյանը իրենց ասուլիսներն ու հարցազրույցները տան մայրենի լեզվով՝ նրանք արդեն բավականաչափ երկար են ապրում Հայաստանում: Ինչի՞ համար է պետք, որ խելացի մարդիկ ելույթ ունենան հայերեն: Շատ պարզ՝ որպեսզի մշակվեն, բյուրեղանան հասարակական, գիտական ոլորտներում մեր լեզվական իրողությունները: Դա կօգնի նաեւ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղը մեր պետական լեզվով անցկացնելուն:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## Այս սարն ո՞ւմն է, այս քարն ո՞ւմն է...

Քաջարան գյուղի եւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի միջեւ ձգվող անհամաձայնությունը՝ պետության գերակա շահ ճանաչված հողերի կապակցությամբ, դեռ չի ավարտվել: «Առավոտը» բազմիցս ներկայացրել է գյուղացիների տեսակետը, նախորդ շաբաթ ներկայացրեցինք նաեւ կոմբինատի ղեկավարության տեսակետը: Սակայն ավելի լավ պատկերացնելու համար իրավիճակը եւ մեր ընթերցողներին ավելի մանրամասն տեղեկատվություն հաղորդելու նպատակով որոշեցինք անձամբ լինել տեղում՝ չզգուշացնելով կողմերին: Թե ինչ ստացվեց դրանից՝ կներկայացնենք թերթի առաջիկա համարներում եւ «Առավոտի» կայքում: Լուսանկարում կոմբինատի՝ ներկայումս շահագործվող հանքերն են:

Լուսանկարը՝ ԳԱԳԻԿ ՇԱՄՇՅԱՆԻ



## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### «Ազատ դեմոկրատները» պատրաստ է համագործակցել

«Ազատ դեմոկրատները» պատրաստ է միանալ քաղաքական առողջ ուժերի՝ առաջիկա խորհրդարանական ընտրություններում դրանց արդարությունն ապահովելու եւ հնարավոր կեղծիքները կասեցնելու ջանքերին: Երեկ «Առավոտի» հարցին ի պատասխան՝ ասաց կուսակցության գործադիր քարտուղար Մասիս Այվազյանը. «Քաղաքական բոլոր այն ուժերը, որոնք իրենց անցյալով եւ գործունեությամբ այսօր հասարակությանը հավատ են ներշնչում եւ պատրաստ են պայքարել հանուն արդար ընտրությունների անցկացման՝ կարծում եմ, ցանկացած ընտրատեղամասում պիտի փորձեն միասնաբար աշխատել, այլ տարբերակ լինել չի էլ կարող»:

Կարդացեք էջ 2:

### Ովքե՞ր են վարչապետի եւ ԱԺ նախագահի միջեւ «սեպ խրողները»

Վերջին շրջանում տարբեր լրատվամիջոցներում շրջանառվում են լուրեր, թե վարչապետ Տիգրան Սարգսյանի եւ ԱԺ նախագահ Սամվել Նիկոյանի հարաբերությունները բավականին լարված են, թե Նիկոյանը նեղացել է վարչապետից, իսկ մեկ այլ հրապարակման համաձայն էլ՝ փորձում է հաճոյանալ վարչապետին: «Առավոտի» ունեցած տեղեկություններով՝ վարչապետի եւ ԱԺ նախագահի հարաբերությունները նույնիսկ բավականին ջերմ եւ ընկերական են: Մեր աղբյուրի փոխանցմամբ՝ նման տեղեկությունները տարածում են նախկինում բարձրաստիճան պաշտոններ զբաղեցրած, իսկ այժմ «խաղից դուրս» մղված որոշ պաշտոնյաներ, ովքեր խանդով են վերաբերվում Տիգրան Սարգսյանի եւ Սամվել Նիկոյանի ընկերական հարաբերություններին: Թե հատկապես ովքեր են վարչապետի եւ ԱԺ նախագահի միջեւ «սեպ խրողները»՝ «Առավոտին» առայժմ չհաջողվեց ճշտել:

### ՀՀԿ պատգամավորի խոստովանությունը

Երեկ ՀՅԴ պատգամավոր Արծվիկ Մինասյանը հատուկ «Առավոտի» համար մի հարց ուղղեց ՀՀԿ պատգամավոր Վարդան Այվազյանին եւ խնդրեց ձայնագրել՝ վստահեցնելով, որ այս հարցի պատասխանը շատ կարեւոր է. «Ո՞նց եղավ, որ վարչապետ Սերժ Սարգսյանի գլխավորած կառավարությունն ավելի լավ արդյունքներ տվեց, քան ներկա կառավարությունը»: Վարդան Այվազյանը պատասխանեց. «Որովհետեւ շատ ավելի լավ էր աշխատում՝ տվյալ պարագայում»: Պարոն Մինասյանը պարզապես երջանիկ էր՝ այս բացառիկ պատասխանը լսելով, որովհետեւ ստացվում է, որ ՀՀԿ-ն նույնպես խոստովանում է, որ Տիգրան Սարգսյանի գլխավորած կառավարությունն այնքան էլ լավ չի աշխատում:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Երկուշաբթի, ժամը 12-ին, «Փաստարկ» ամուլի ակումբի հյուրն է Հայկոմկուսի նախագահ Ռուբեն Թովմասյանը:

### Եղանակ

Երեւան -4 +3, Շիրակ -13 0, Կոտայք -13 0, Գեղարքունիք -13 0, Լոռի -7 +3, Տավուշ -7 +3, Արագածոտն լեռներ -13 0, Արագածոտն նախալեռն. -6 +4, Արարատ -6 +4, Արմավիր -6 +4, Վայոց Ձոր լեռներ -12 +1, Վայոց Ձոր նախալեռն. -7 +4, Սյունիքի հովիտներ -5 +9, Սյունիքի նախալեռներ -8 +5, Արցախ -2 +7

## «Մարդը մեղավո՞ր է, որ հաստ է կամ ուղեղ չունի»

ԲՀԿ խմբակցության պատգամավոր Վարդան Բոստանջյանը երեկ aravot.am-ի հետ զրույցում անդրադառնալով ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի հայտարարությանը, թե կապ չունի որ կուսակցությունից ու ինչ հաստությամբ հանցագործների են բերման ենթարկում՝ ասաց. «Օրինակի համար՝ ուրիշ կուսակցություններում հաստեր չկա՞ն: Մենակ մեր կուսակցությանը չէ՝ իրանց կուսակցությանն էլ կպավ, այսինքն՝ հանրապետականներին: Հիմա մարդը մեղավո՞ր է, որ հաստ է, ֆիզիկական դիսկոմֆորտ ունի կամ ուղեղ չունի»:

Պատգամավորի խոսքերով, իրավիճակ խառնողները վերջին շրջանում անընդհատ շահարկում են ԲՀԿ-ական հանցագործների ձերբակալությունները. «Վիճակագրությամբ 100 տոկոս ձերբակալվածներից միայն 10 տոկոսն է, որոնք իբր թե ԲՀԿ անդամ են: Իրավիճակ խառնողները այն 90 տոկոսի մասին չեն խոսում, խոսում են 10 տոկոսի մասին ու թյուր կարծիք ստեղծում, թե ոստիկանությունն ընկել է ԲՀԿ-ի հետեւից: Բոլոր իրավիճակ խառնողները՝ այդ մանր-մունր, զիբիլ քաղաքական ուժերը, երբեք խաղողը մուրթին չհասնող ողորմելիներ են»:

ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

## Սերգո Երիցյանի պարզաբանումը

Ձեր թերթի ս.թ. հունվարի 13-ի «Միանշանակ օրենքի խախտում է» հրապարակումը պատրաստելիս հեղինակը ինձանից խնդրել է մեկնաբանել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի լեզվի նկատմամբ ունեցած պահանջները, ինչը եւ ես արել եմ՝ այն չկապելով որեւէ հաղորդաշարի հետ:

Ընդհանրապես, ուզում եմ ավելացնել, որ ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչությունը չի զբաղվում «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի լեզվին առնչվող դրույթների կատարման նկատմամբ վերահսկմամբ, քանի դեռ այն օրենսդրությամբ չի վերահասցեագրվել մեզ:

ՍԵՐԳՈ ԵՐԻՑՅԱՆ
ՀՀ ԿԳՆ լեզվի պետական
տեսչության ղեկավար

# «Ժառանգության» եւ ՀՅԴ-ի նախաձեռնությունը թափ է հավաքում

### Երեկ այս եւ ընտրություններին առնչվող այլ հարցեր են քննարկել «Ժառանգությունն» ու «Ազատ դեմոկրատները»

Aravot.am-ի տեղեկություններով՝ երեկ երեկոյան հանդիպել են «Ժառանգություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունների ներկայացուցիչները: Հանդիպումը տեղի է ունեցել ղեկավար ներկայացուցիչների մակարդակով. ինչպես «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը երեկ ասաց aravot.am-ի հետ զրույցում (http://www.aravot.am/2012/01/13/26555/), հանդիպմանը մասնակցել են «Ժառանգության» կողմից՝ ինքն ու կուսակցության խորհրդարանական խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը, «Ազատ դեմոկրատներից»՝ Խաչատուր Քոքոբելյանն ու Արարատ Զուրաբյանը: Հանդիպման ընթացքում, մեր տեղեկություններով՝ քննարկել են «Ժառանգության» եւ ՀՅԴ-ի՝ Աժ 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին անցնելու առաջարկի վերաբերյալ համատեղ հայտարարությունից բխող՝ օրենսդրական նախաձեռնությանն ու այդ համատեքստում համատեղ քայլերին առնչվող, ինչպես նաեւ այլ՝ խորհրդարանական ընտրություններին վերաբերող հարցեր:

Ռուբեն Հակոբյանը, սակայն, հաստատեց մեր տեղեկության առաջին հատվածը եւ մասամբ՝ երկրորդը, այնքանով, որքանով համամասնական ընտրակարգին անցնելու նախաձեռնությունն ընդհանրապես առնչվում է առաջիկա ընտրություններին, բայցեւ հավելեց. «Իրենց («Ազատ դեմոկրատների») հետ մենք ճանապարհ ունենք անցնելու: Մենք պայմանավորվեցինք, որ կարող ենք շարունակել մեր համագործակցությունը, քանի որ գաղափարաքաղաքական հարթության վրա բավականին լուրջ ընդհանրություններ ունենք: Բայց առաջիկայում քաղաքական ֆորում է լինելու, որտեղ կլինեն ե՛ւ նրանք, ե՛ւ բոլոր այն ուժերը, որոնք զորակցություն են հայտնել ՀՅԴ-ի հետ մեր համատեղ նախաձեռնությանը»,- ասաց Ռուբեն Հակոբյանը:

Զրուցեցինք նաեւ կուսակցության խորհրդարանական խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի հետ: Վերջինս մեր հարցադրումներին ի պատասխան՝ ասաց. «Ընդհանրապես ամեն ինչ էլ քննարկվել է: Բայց մենք հանդիպում ենք բոլոր ուժերի հետ էլ, բոլոր այն ուժերի, որոնք իրենց աջակցությունն են հայտնել մեր համատեղ նախաձեռնությանը: Սրանք սովորական աշխատանքային հանդիպումներ են, որոնք միշտ էլ լինում են»,- ասաց Արմեն Մարտիրոսյանը՝ մեր ճշտող հարցին հավելելով, թե նման հանդիպում եղել է նաեւ ՀԱԿ-ի ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումների արդյունավետությանն անդրադառնալով՝ պատգամավորը կարծիք հայտնեց, թե արդյունքը արդեն կա. «Դրանք այն հայտարարություններն են, որոնցով քաղաքական շատ ուժեր իրենց աջակցությունն են հայտնել «Ժառանգության» եւ ՀՅԴ-ի օրենսդրական նախաձեռնությանը»: Իսկ մնացածը, ըստ Մարտիրոսյանի, ժամանակի ընթացքում պարզ կլինի: Մեր հարցումփորձերին արձագանքելով՝ նա նաեւ հավելեց, թե այդ խնդրի շուրջ մասնավորապես «Ազատ դեմոկրատների» հետ քննարկել են ընդհանուր ռազմավարության մշակման հարցերը՝ միասնական քայլեր, դրանց հաջորդականությունը, որոնք, սակայն, դեռ քննարկման փուլում են: Ե՛վ Ռուբեն Հակոբյանը, ե՛ւ Արմեն Մարտիրոսյանը նախընտրեցին շրջանցել «Ազատ դեմոկրատների» հետ հնարավոր ավելի ընդգրկուն համագործակցության մասին մեր հարցադրումները:



«Ազատ դեմոկրատներ» կուսակցության ղեկավարների հետ խոսել երեկ մեզ չհաջողվեց, բայց կուսակցությունում նաեւ չժխտեցին այդ հանդիպման փաստը: Մեր հարցին, թե արդյոք խորհրդարանական ընդդիմության օրենսդրական նախաձեռնության շուրջ քննարկումներ եղե՞լ են նաեւ ՀՅԴ-ի հետ, մեզ պատասխանեցին, թե՝ ՀՅԴ-ի հետ անմիջական շփումներ առայժմ չեն եղել, բայց «Ժառանգության» կողմից միջնորդավորված տեսակետների փոխանակում եւ պայմանավորվածություններ եղել են:

Իսկ թե՝ հնարավո՞ր է, որ այս ուժերի միջեւ համագործակցությունն ավելի լուրջ համագործակցության դաշտ բացի նրանց համար, ընդհուպ մինչեւ ընտրական դաշինքների ձեւավորում, կուսակցությունում ասացին, թե քննարկվող կոնկրետ հարցը կարեւորում են, բայց միայն դա այն հարցը չէ, որի շուրջ հնարավոր է ավելի լայն համագործակցության մասին խոսել: Փոխարենը, ըստ «Ազատ դեմոկրատների», կոնկրետ խնդրի շուրջ «Ժառանգության» եւ ՀՅԴ-ի նախաձեռնությունը պաշտպանած ուժերը դատապարտված են միասնական քայլեր անելու ու փորձում են անել:

Հիշեցնենք, որ օրերս «Ժառանգություն» եւ ՀՅԴ կուսակցությունների խորհրդարանական խմբակցությունները համատեղ օրենսդրական նախաձեռնության կարգով շրջանառության մեջ են դրել «Ընտրական օրենսգրքում», «Ազգային ժողովի կանոնակարգում», «Սահմանադրական դատարանի մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերի փաթեթը, որով առաջարկվում է անցնել խորհրդարանի 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգի: Երկու կուսակցությունների այս նախաձեռնությանն իրենց աջակցությունն են հայտնել ոչ միայն «Ազատ դեմոկրատները», այլեւ ՀԱԿ-ը, ՀՌԱԿ-ը, «Շրջադարձ» եւ Ժողովրդական, Ազգային ժողովրդավարական Հայաստանի աշխատավորական սոցիալիստական, Միավորված աշխատանքային կուսակցությունները, նաեւ ՀԴԿ-ն ու քաղաքական եւ քաղաքացիական բազմաթիվ խմբեր ու մտավորականներ:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# Համագործակցություն-2012

Ավարտելով այցը Բելառուսի Հանրապետություն՝ ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը երեկ ժամանել է Մոսկվա: Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպանատանը ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը հանդիպել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժային: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ-ՀԱՊԿ համագործակցության խնդիրների լայն շրջանակ եւ հանգամանալից անդրադարձ է կատարվել Երեւանում ստորագրված ՀԱՊԿ շրջանակներում համագործակցության միջոցառումների ծրագրին եւ ժամանակացույցին՝ ներառյալ «Կանալ», «Նելեգալ», «Պրոկսի» միջոցառումների իրականացմանը, որոնք առնչվում են տեղեկատվական անվտանգությանը, ապօրինի միգրացիային եւ թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի խնդիրներին: Քննարկվել են նաեւ 2012թ. Հայաստանում ՀԱՊԿ արագ արձագանքման հատուկ ստորաբաժանումների զորավարժության անցկացմանն առնչվող հարցեր: Այս եւ ձեռք բերված մյուս պայմանավորվածությունների իրականացման նպատակով սույն թվականի փետրվար ամսին Հայաստան կայցելի ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի գլխավորած պատվիրակությունը:

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը ներկա կգտնվի նաեւ հայ անվանի հետախույզ Գեւորգ Վարդանյանի հուղարկավորման արարողությանը:

Իսկ նախօրեին պաշտոնական այցով Բելառուսի Հանրապետությունում գտնվող ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը



հանդիպել է Բելառուսի Հանրապետության Անվտանգության խորհրդի պետական քարտուղար Լեոնիդ Մալցեւի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են անվտանգության ոլորտում համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ: Նեղ կազմով հանդիպմանը հետեւել են ընդլայնված կազմով քննարկումներ երկու երկրների գործընկեր կառույցների պատվիրակությունների մասնակցությամբ, որի ընթացքում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի եւ Բելառուսի Հանրապետության Անվտանգության խորհրդի պետական քարտուղարության միջեւ 2012-2013թթ. համագործակցության ծրագիրը:

Այնուհետեւ ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը հանդիպել է Բելառուսի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ: Փոխանցելով ՀՀ նախագահի ջերմ ողջույնը՝ ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը համոզմունք է հայտնել, որ պատվիրակության այցը կլինի առավելապես արդյունավետ հայ-բելառուսական երկկողմ հարաբերությունների ամրապնդման եւ տարբեր ոլորտներում հետագա փոխգործակցության խորացման առումով:

Կողմերը գոհունակություն են հայտնել երկու երկրների միջեւ բարեկամական հարաբերությունների առկա մակարդակի կապակցությամբ եւ ընդգծել, որ այդ գործընկերային հարաբերությունները, ինչպես նաեւ դիրքորոշումների առկա ներդաշնակությունը ՀԱՊԿ եւ միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում մեծապես կնպաստեն անվտանգությանն առնչվող ոլորտներում, ինչպես նաեւ ռազմաքաղաքական, առեւտրատնտեսական եւ այլ ասպարեզներում երկկողմ համագործակցության էլ ավելի խթանմանը: Ալեքսանդր Լուկաշենկոն նշել է, որ անհրաժեշտ է ջանքեր գործադրել ապրանքաշրջանառության ծավալների մեծացման ուղղությամբ, քանի որ բավականին մեծ է երկու երկրների առկա ներուժը: Բելառուսի նախագահն իր գոհունակությունն է հայտնել Բելառուսի Հանրապետություն կատարած այցի ընթացքում հայկական կողմի ներկայացրած տարբեր ոլորտներում երկու երկրների միջեւ կապերի հետագա խորացմանն ուղղված առաջարկների կապակցությամբ եւ պատրաստակամություն հայտնել հայկական կողմի հետ քննարկել համագործակցության ցանկացած առաջարկ:

Հայաստանյան պատվիրակությունն այնուհետեւ հանդիպել է Բելառուսի Հանրապետության Ռազմարդյունաբերության պետական կոմիտեի ղեկավարության հետ: Քննարկումների առանցքում են եղել ռազմարդյունաբերության ոլորտում համագործակցության խթանմանն ուղղված հարցեր, այդ թվում՝ հայ-բելառուսական համատեղ ձեռնարկությունների հիմնումը: Կարեւորվել է ռազմատեխնիկական հարցերով հայ-բելառուսական հանձնաժողովի հոկտեմբերի նիստին ընդունված որոշումների կենսագործման անհրաժեշտությունը: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ փետրվար ամսին Հայաստան կժամանի Բելառուսի ռազմարդյունաբերական համալիրի ներկայացուցիչներից կազմված պատվիրակությունը:

Այցի ավարտին Արթուր Բաղդասարյանն ընդունել է Բելառուս Ագրոարտ լիզինգ գործակալության գլխավոր տնօրեն Պավել Կոււպնովին: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում Հայաստանում բացել ընկերության ներկայացուցչությունը՝ Հայաստանին անհրաժեշտ սարքավորումների եւ գյուղտեխնիկայի տրամադրման նպատակով:

Ա aravot daily
ՇԱԲԱԹ 14.01.2012

# Քաղաքական գործիչները պետք է մնան դրսում

## Գալուստ Սահակյանի հերթական բացառիկ առաջարկը

ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավոր դարձած 41 պատգամավորներից միայն 10-ը այսօր ընդգրկված չեն ԱԺ խմբակցություններում, բոլոր 31-ը այս կամ այն խմբակցության անդամ են: Ընդ որում՝ մեծամասնականները հիմնականում ՀՀԿ կամ ԲՀԿ խմբակցություններն են համալրել: Սակայն, որքան էլ զարմանալի թվա, ըստ ԱԺ կայքում տեղադրված պատգամավորների ցանկի՝ որեւէ խմբակցության անդամ չեն ինչպես ԲՀԿ փոխնախագահ, ԱԺ փոխնախագահ Սամվել Բալասանյանը, այնպես էլ գործարար պատգամավոր Սամվել Ալեքսանյանը, եւս երկու ԲՀԿ-ականներ՝ Ռուստամ Գասպարյանը եւ Մարտուն Գրիգորյանը: Որեւէ խմբակցության անդամ չեն նաեւ թիվ 41-ից ընտրված Հակոբ Հակոբյանը, թիվ 30-ից ընտրված Վիկտոր Դալլաքյանը, ինչպես նաեւ թիվ 10-ից ընտրված՝ «Ազգային Միաբանության» անդամ Արա Սիմոնյանը: Թիվ 36-ից ընտրված Մխիթար Վարագյանը եւ թիվ 40-ից՝ Միքայել Վարդանյանը, Տիգրան Թորոսյանը եւ թիվ 14-ից ընտրված Լյովա Խաչատրյանը եւս դուրս են խմբակցական ցուցակներից: Ժամանակին, երբ խորհրդարանում գործում էր «Ժողովրդական պատգամավոր» խումբը (խմբի ղեկավարն էր ՀՀ նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար Կարեն Կարապետյանը), մեծամասնականով ընտրվածները հիմնականում հավաքվում էին հենց այդ խմբում, այսօր հատուկ նրանց համար խումբ չկա: Ընտրություններից երեքուկես ամիս առաջ ընդդիմության սկսած պայքարը՝ հանուն մեծամասնականի վերացման, իշխող ուժերի ներկայացուցիչները համարում են նախընտրական շոուի մի մաս: Ոմանք էլ մտածում են, թե այս աղմուկը նաեւ իշխանությանն է ձեռնտու, որ որոշ մեծամասնական տեղեր




կրճատելով՝ իբր տեղ կբացվի որոշ ընդդիմադիրների համար: Իսկ ինչո՞ւ ոչ՝ եւ շամփուրները չեն այրվի, եւ շամփուրի վրայինը: Նախորդ օրը ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ, ԱԺ արտաքին հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Ռուստամյանը «Հանրային» հեռուստաընկերության «Հարցազրույց»-ում հայտարարեց, որ իշխանությունը, պահպանելով 41 մեծամասնական տեղերը, արդեն ճիշտ այդքան ձայն ունենալով է գնում խորհրդարանական ընտրությունների, եւ դա ստեղծում է անհավասար պայմաններ: Ի հակադրումն ասվածի՝ ՀՀԿ-ական Ռաֆիկ Պետրոսյանն էլ հակադարձեց՝ թող ընդդիմությունն էլ իր թեկնածուները դնի մեծամասնականով, եւ եթե ունեն բավարար ռեսուրսներ, թող հաղթեն:

ՀՀԿ խմբակցության ղեկավար, ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանը «Առավոտի» հետ զրույցում բավականին ուշագրավ մի միտք արտահայտեց, որը դարձրինք վերնագիր: Ըստ Գալուստ Սահակյանի՝ այսօր խորհրդարանից դուրս կան մի շարք հայտնի գործիչներ, որոնց ղեկավարած կուսակցությունները չունեն բավարար վարկանիշ եւ չեն կարող հաղթահարել անհրաժեշտ շեմը, չունեն «հասարակական ընդգրկում»՝ խորհրդարան անցնելու համար, սակայն իրենք՝ լիդերները, շատ կարեւոր են հայաստանյան քաղաքական դաշտի համար, եւ ինչո՞վ վատ կլինի, որ հենց այդ գործիչները առաջադրվեն մեծամասնականով եւ հաղթեն. «Միջազգային փորձագետներին երբ հարցնում ես՝ ո՞րն է ճիշտ, զարմացած նայում են, ասում են՝ որը որ դուք ճիշտ եք համարում, դա էլ ճիշտն է. այս տեսակետից մենք գտնում ենք, որ մեծամասնականը պիտի պահպանվի»: Գալուստ Սահակյանը կարծում է՝ խորհրդարան պետք է գան այն պատգամավորները, ովքեր «իրենց համար աշխատանքային կենսակերպ են համարել պատգամավորությունը եւ որոշակի դերակատարում ունեն հանձնաժողովներում, հասարակության հետ շփումներում, լիագումար նիստերում, բնականաբար՝ մենք գնալու ենք այդ ճանապարհով, որպեսզի նրանց ընդգրկենք ցուցակում, բայց նորերը, ովքեր կգան, հենց այդպիսիները լինեն, իսկ մեծամասնականն ազատ է: Ասեմ նաեւ հետեւյալը՝ եթե ուզում ենք շատ արդյունավետ Ազգային ժողով ունենալ, պիտի ապահովենք քաղաքական գործիչների կազմ, որոնց մեծ մասը դրսում են մնացել, եւ կարող եմ նաեւ թվարկել՝ բավականին փորձառու քաղաքական գործիչներ ուներ ՀՀՇ-ն, այդպիսիք էին նաեւ Վազգեն Մանուկյանը, Պարույր Հայրիկյանը, Կարապետ Ռուբինյանը, Արամ Մանուկյանը, Արա Սահակյանը, էլի կարող եմ թվարկել, հիմա նրանք պիտի լինեն այստեղ, եւ քննարկումները ավելի արդյունավետ կլինեն: Տարիների փորձը ցույց է տալիս, որ մենք երբեմն ստիպված ենք լինում մեր դերակատարումը տեսնել նաեւ որպես ընդդիմադիր, այսինքն՝ այդ ֆիլտրող քաղաքական ուժերը, որոնք մեր հասարակությանը պիտի ներկայացնեն խնդիրները, եւ դրան նաեւ մենք պիտի հետեւենք, երբեմն մենք ինքներս ենք այդ դերը կատարում»:

ՀՀԿ խմբակցության ղեկավարը պնդում է, որ մեծամասնականի տեղերը ժամանակի ընթացքում պակասեցնելու առաջին ջատագովները հենց հանրապետականներն էին. «Մեր կողմից է եղել առաջարկը, եւ այսօր անպատգուցելի երեւույթ է, թե որը ավելի նպաստավոր կդարձնի ընտրությունները: Մեկ գործոն կա, որը ընտրությունները դարձնում է նպաստավոր՝ ընտրությունները պիտի լինեն արդար՝ ուզում է՝ մեծամասնական լինի, ուզում է համամասնական: Առավել եւս այն կուսակցությունները, որոնք տարածքներում ունեն հանրությանը ավելի մոտ կանգնած, երեւացող անձինք, նրանք պիտի պնդեն, որ մեծամասնականը շատ լինի: Ժամանակին, երբ քննարկում էինք «Ընտրական օրենսգիրքը», առավել ակտիվ էր Դաշնակցությունը, մասնավորապես՝ «Ժառանգությունը», եւ այդ ժամանակ արձագանքներ չէին ստանում արտախորհրդարանական ընդդիմություններից: Որպես արդեն ընտրական տարի՝ սա մի մեսիջ է՝ ուղղված քաղաքական դաշտին, որովհետեւ երեւի իրենք կարծում են, թե սա իրենց համար ռազմավարական նշանակություն կունենա: Մեզ համար ամեն ինչ հստակ է, մենք մեր որոշումը կայացրել ենք: Ընդդիմադիր այն ուժերը, որ պայքարում են համամասնականի համար, մի կողմից՝ պիտի իմանան՝ եթե իրենք տարածքներում աշխատած լինեին այնպես, ինչպես մենք ենք աշխատել, կունենային կուսակցության այնպիսի անդամներ կամ իրենց հարող այնպիսի անդամներ, որոնք կկարողանային հաղթահարել մեծամասնականի շեմը, եւ բնականաբար՝ այս վեճը չէր լինի: Առավել եւս՝ ամբողջական համամասնական դարձնելը կնշանակեր նաեւ Երեւան քաղաքի Ազգային ժողով»:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

# Երբ «գլուխ գովի» իշխանությունը

## ՀԿԿ առաջին քարտուղարի համար առաջնայինը ոչ թե որեւէ ընտրակարգի գերակայությունն է, այլ արդար ընտրություն անցկացնելու կամքը:

2011-ի ավարտին հայաստանյան քաղաքական դաշտը հստակ բաժանում ստացավ՝ 100 տոկոսանոց համամասնական ընտրական կարգին եւ, այսպես ասած, խառը ընտրակարգին կողմ ուժեր: Այս օրերին յուրաքանչյուրը փորձում է բերել իր իրավացիության փաստարկները, իր ճշմարտացիության հիմնավորումները: Հայաստանի կոմկուսում, սակայն, յուրահատուկ մոտեցում ունեն այս հարցին: Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի առաջին քարտուղար Ռուբեն Թովմասյանն «Առավոտի» հարցին՝ ինչո՞ւ չեն փորձում միանալ ընդդիմադիր դաշտին, որն այս օրերին համախմբվել է 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգով առաջիկա խորհրդարանական ընտրություններն անցկացնելու առաջարկի շուրջ, ասաց. «Ընդհանրապես, ՀԿԿ-ն եւս կողմնակից է համամասնական ընտրակարգին: Ի դեպ, այն եւս չի արգելում կամ չի խանգարում կուսակցություններին, որ ում ուզեն՝ ընդգրկեն իրենց ցուցակներում»: Ընկեր Թովմասյանը նորմալ է համարում, երբ այն անկուսակցականները, ովքեր հանրաճանաչ են, աշխատել կամ արարել են պետության, հասարակության համար, տնտեսական, մշակութային կյանքում հետք են թողել՝ ընդգրկվում են ընտրացուցակներում, բայց մեր օրերի համար չի բացառում նաեւ «թալանչիների, գող-ավազակների» ընդգրկումը կուսակցական ցուցակներում: Հետեւաբար ընտրությունների կազմակերպման տեսանկյունից նա թիվ մեկ հարցը չի համարում որեւէ ընտրակարգի գերակայությունը. «Գլխավորն այն է, որ կամք լինի՝ ընտրությունները արդար եւ թափանցիկ անցկացնելու, որ չլինեն կեղծիքներ եւ զեղծարարություններ, ու ժողովուրդը հերթական անգամ խաբված դուրս չգա»:

Ռուբեն Թովմասյանին եւ կոմունիստներին չեն հուսադրում իշխանության տարբեր տրամաչափի չինովնիկների հայտարարությունները առ այն, որ առաջիկա ընտրությունները ազատ ու արդար են լինելու, ու որ դա հենց իշխանությանն է պետք: Նրանց առավել եւս չեն ոգեւորում եվրոպացիների հայտարարությունները կամ միջամտությունները: «Ասել շատ բան կարելի է, բայց ասելը մի բան է, անելը՝ այլ: Շատ բան ասվում է, ասված էլ՝ մնում: Իսկ առաջիկա ընտրությունների արդարության մասին կարելի կլինի խոսել ընտրություններից հետո միայն: Եթե հետընտրական գործընթացներում ժողովուրդը փողոց դուրս չեկավ՝ թող մեր իշխանավորները գլուխ գովեն»,- ասում է ընկեր Թովմասյանը՝ օրինակ բերելով ՌԴ-ում վերջերս կայացած ընտրությունները. «Կոմկուսը, փաստորեն, կրկնապատկեց իր մանդատների քանակը: Կառավարող կուսակցությունը կորցրեց իր քվեների 15 տոկոսը: Սա նրա արդյունքն է, որ Պետդումայի ընտրություններում արդարության նշույլներ երեւացին, ու այս համակարգից զզված ժողովուրդը ապավինեց Կոմկուսին՝ մի ուժի, որի հետ անցած ճանապարհ ուներ»:



Արդյունքում՝ ընկեր Թովմասյանը գրեթե վստահ է, որ առաջիկա ընտրությունները եւս ազատ եւ արդար չեն լինելու: Ելնելով ընկեր Թովմասյանի վերոնշյալ մտքերից՝ հետաքրքրվեցինք՝ փաստորեն հույս չունե՞ն, որ ՀԿԿ-ն այս անգամ էլ խորհրդարան կմտնի: Արձագանքը եղավ. «Եթե Կոմկուսին չճնշեն, ամեն տեսակի հակակոմունիստական տիպեր հանդես չգան, ապա Կոմկուսն անպայման կլինի խորհրդարանում: Բայց ես հաստատ համոզված եմ, որ այդ ճնշումներն ու կեղծիքները դեր կխաղան մեր հետագա ճակատագրում»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

### Պաշտոնազրկեցին կրիմինալի հետ կապի պատճառո՞վ

Ոստիկանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ օրերս Արթիկում հնչած կրակոցների պատճառով աշխատանքից ազատել են Արթիկի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Արմեն Հակոբյանին:

Հիշեցնենք, որ 2 օր առաջ Շիրակի կրիմինալ դեմքերից մեկը՝ գետափցի Անուշավան Բաղդասարյանը, Արթիկում «ռազբորկայի» մեջ էր մտել ծառայության մեջ գտնվող 25-ամյա ոստիկան Լուկաշ Մինասյանի հետ: Նա արթիկցի ոստիկանից պահանջել էր պատասխան տալ Ռուսաստանում գտնվող իր խաբեբա եղբոր փոխարեն, որը տարել, աշխատեցրել է իր եղբորը ու փողերը չի տվել:

ՀՀ ոստիկանության լրատվական բաժնի ղեկավար Արմեն Մովսիսյանը մեզ փոխանցեց, որ Արթիկի քրեական բաժանմունքի պետն ազատվել է իր սեփական դիմումի համաձայն: Մինչդեռ, ոստիկանության մեր լավատեղյակ աղբյուրների փաստելով, նրան հարկադրել են հեռանալ համակարգից, քանի որ պաշտոնյան կապի մեջ է մտել գետափցի կրիմինալների հետ: Ավելի հստակ, քրեական հեղինակության շրջապատը՝ զանգահարելով նրան, փորձել է բանակցել, հարցեր լուծել, հեռախոսազանգը թաքուն լսել են ու նրան ստիպել հեռանալ աշխատանքից: Մեզ չհաջողվեց այս թեմայով զրուցել Արմեն Հակոբյանի հետ ու պարզել, թե իրականում այսպե՞ս է եղել:

# Ռուբէն Հախվերդյանն այլեւս ՀՅԴ-ի կողքին չի կանգնի

## Քանի որ նրանք, ըստ երգչի, «զադնի» տվեցին

Հայտնի արվեստագետ Ռուբեն Հախվերդյանը Ազգային ժողովի բոլոր ընտրությունների ժամանակ համակրել է Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությանը ու կանգնել նրա կողքին, մշտապես քվեարկել է նրանց օգտին: Անգամ «Կեցցե Դաշնակցությունը» վերնագրով երգ ունի՝ նվիրված ՀՅԴ-ին: Սակայն հիմա այլեւս չի պատրաստվում «օգտակար» լինել Դաշնակցությանը, չնայած, ամեն դեպքում, ՀՅԴ-ին համարում է «եղածների մեջ քիչ թե շատ ազգային դիմագիծ ունեցող կուսակցություն»:

«Առավոտի» հետ զրույցում Ռուբեն Հախվերդյանը հայտարարեց, որ այսուհետ այլեւս ոչ մի քաղաքական ուժի կողքին չի կանգնելու. «Ես այն ժամանակ որպես ամենաինտելեկտուալ մարդ տեսնում էի Վահան Հովհաննիսյանին: Ցավոք սրտի, Դաշնակցությունը, չեմ հասկանում՝ ինչու, «զադնի» տվեց: Այն, որ Վահանը նախագահի եղբոր հետ խնամի էր, այս հարցում ոչ մի դեր չի խաղացել, եւ դրանք դատարկ խոսակցություններ են: Նրանց երեխաներն արդեն բաժանվել են, եւ Վահանն ի սկզբանե դեմ էր նրանց ամուսնությանը: Այստեղ բիզնես-շահերն են թերեւս դեր խաղացել»: Ըստ նրա՝ իշխող ՀՀԿ-ի կողքին էլ չարժե կանգնել, քանի որ այն «կոմֆորմիստական» է եւ բացի այդ՝ ՀՀՇ-ի հետ համագործակցեց, բարիշեց ու սիրեց: Մեր այն հարցին, թե ինչ ելք է տեսնում նա այս իրավիճակից, Ռ. Հախվերդյանը պատասխանեց՝ մեզ այսօր պետք են «երիտասարդ ու նոր ուղեղով տղաներ»: Մեր այն դիտարկմանը, որ բոլոր ընտրություններից առաջ այդպիսի ուժեր ստեղծվում են, ինչպիսին էր, օրինակ, ՄԻԱԿ-ը, նա պատասխանեց. «Դրանք սարքովի



բաներ են: Ես չսարքովի բաների մասին եմ խոսում, իսկ այդպիսի բաները ես ստուգել կարողանում եմ: Մեզ նոր ուղեղներ են պետք եւ նոր մտածող տղերք: Եթե վերցնենք Սերժին Սարգսյան եւ Ռոբերտին Քոչարյան, ապա նրանք սովետից են մնացել: Չնայած հիմա նույն սովետն է: Կոմսոմոլից ծնված եւ կոռուպցիայի մեջ գտնվող մարդը ինչպե՞ս կարող է հանկարծ սկսել պայքարել կոռուպցիայի դեմ: Ինչպե՞ս կարող է սովետական մտածողություն ունեցող մարդը, որը մինչեւ 40 տարեկան այդպես է մտածել՝ բուրգաձեւ, այսինքն՝ պապան՝ ռուսը, ինչ ասեց, պետք է անել, մեկ օրվա մեջ դառնալ ազատամիտ եւ ազատածին: Ես իրենց ասել եմ, որ իրենք ոնց որ մերսեդեսներ լինեն՝ 24-ի մատոռներով»:

Պարոն Հախվերդյանից հետաքրքրվեցինք՝ այդ դեպքում ինչո՞ւ է տարբեր առիթներով ընդունում գործող իշխանությունների հովանավորությունները, եթե այժմ քննադատում է: «Սահմանադրությամբ դեմոկրատիա է մեզ մոտ, եւ ես իմ չափի մեջ՝ ոչ ավել, հայտնել եմ իմ կարծիքը: Հա, ի՞նչ անենք, որ օգնել են, ձեռքերը պաչե՞մ: Եթե ինձ փրկել է մեկը, իսկ իմ ընտանիքին՝ կոտորել, ես նրան պետք է շնորհակալությո՞ւն հայտնեմ: Ինձ ուղղակի ձրի ուղարկեցին արտասահման, որ բուժվեմ՝ որպես հայտնի արվեստագետի, կար այդպիսի պայմանագիր, եւ դա արվել է ձրի: Իսկ փողը, որ իմ անունով հավաքվել էր, ես ուղարկել եմ Ղարաբաղ, դա էլ հայտնի է: Ես դա արել եմ, որպեսզի ցույց տամ, որ մենք զրոզրո ենք դուրս եկել, եւ խնդրում եմ, որ իմ աչքը չկոխեն, որ ինձ օգնել են: Ինձ օգնել է նաեւ 2-րդ կառավարությունը, որպեսզի «0-ից 100 տարեկան» գիրքը տպագրվի, եւ հիմա էլ են իշխանավորներն օգնում, որ 2 դիսկ հանենք, բայց չէ՞ որ դա անում են իրենք իրենց եւ իրենց երեխաների համար: Հիմա ես իրենց շնորհակալություն կհայտնեմ գրքի մեջ եւ ձայնապնակի կազմում»,- պատասխանեց պարոն Հախվերդյանը:

Ըստ նրա՝ այլեւս չի կարելի այդպես շարունակել եւ պետք է ինչ-որ բան անպայման փոխել. «Պատերազմը դեռ չի վերջացել, ես կարծում եմ, որ պատերազմը շարունակվում է՝ ոչ թե թուրքերի հետ, այլ սեփական կառավարության դեմ: Եթե այսպես շարունակենք, ապա կվերանանք որպես ազգ: Եթե դառնանք 1 միլիոն կամ 900 հազար հոգի, Հայաստանն ուղղակի տարածք կկոչվի: Բայց ես չեմ ուզում կորցնել իմ վերջին հույսը, որ երեխաներս իրենց հողի վրա կմեծանան, քանի որ ուր էլ գնանք՝ մենք օտար ենք: Այստեղ էլ ենք արդեն օտար, որովհետեւ այլախոհ ենք եւ այլ ձեւով ենք մտածում»:

Մեր հարցին, թե նրա գործընկեր-արվեստագետներից շատ շատերը լքել են Հայաստանը, արդյոք մեր երկրում կատարվող անարդարությունները կստիպե՞ն, որպեսզի պարոն Հախվերդյանն էլ Հայաստանը լքելու որոշում կայացնի, մեր զրուցակիցը պատասխանեց. «Սոցիալական պատճառները կապ չունեն, մարդիկ ավելի շատ գնում են բարոյալքվածության, լքվածության պատճառով, այս 3 կառավարությունների նկատմամբ անհույսությունից, հիմնականում աշխատանք չունենալուց եւ այլն: Թունելի վերջում եթե լույս չի երեւում, մարդիկ ի՞նչ անեն: Գիտեք, էլիտա ստեղծվում է գոնե նորմալ հասարակության մեջ, որն ապրում է բարեկեցիկ կյանքով: Իսկ մեզ մոտ իրավիճակ է ստեղծվել, որ եթե անգամ թքես իշխանավորների երեսին կամ ինչ էլ ասես, նրանց համար բոլորովին միեւնույն է: Մեկ է՝ եթե գրես, որ նրանք վատն են, գող են ու ավազակ, միեւնույն է՝ նրանք ամոթ չունեն: Այնպիսի տպավորություն է, որ այս 3 կառավարություններն էլ եկան կործանելու ժողովրդին»:

Բացի այդ, պարոն Հախվերդյանն, ինչպես ինքը մեկնաբանեց, իր՝ Հայաստանում մնալու պատճառներից մեկն էլ հայկական լոլիկի ու բանջարեղենի համնուհոտը վայելելն է, ինչը, արվեստագետի կարծիքով, չես գտնի աշխարհի ոչ մի երկրում. «Բայց արդեն մեր հողի աղտոտվածությունն այնպիսի մակարդակի է հասել, որ մտածում եմ՝ այստեղի բանջարեղենն էլ ուտելու բան չէ»:

ԱՆՈՒՇ ԽԵՉՈՅԱՆ

Ռուբեն Հախվերդյանի հետ մշակութային թեմայով հարցազրույցը կարդացեք «Առավոտի» առաջիկա համարներից մեկում:

### Ծերերի միակ երազանքն ավանդը ստանալն է

Այսօր տարեց կենսաթոշակառուների համար կենսաթոշակի բարձրացումն այնքան էական նշանակություն չունի, որքան խորհրդային տարիներին ներդրած ավանդների վերադարձը:

«Մեզ առանց այդ էլ բան չի մնացել ապրելու: Ի՞նչ է, սպասում են հերթով մահանա՞ն այդ ծեր մարդիկ, որ այլեւս գումարները տալու խնդիր չառաջանա»,- «Առավոտին» դիմած գրեթե բոլոր ավանդատուներն այսպես են մեկնաբանում պետության՝ այս հարցի վերաբերյալ «դանդաղաշարժ» մոտեցումը:

75-ամյա Գրիշա Պետրոսյանը նույնպես իր մտահոգությունը հայտնեց այս առնչությամբ: Նա ի նշան բողոքի՝ օրերս այցելել է ՀՀԿ գրասենյակ, որպեսզի հանրապետականներին վերադարձնի իր կենսաթոշակին ավելացրած 2.500 դրամը. «Ավելի լավ է՝ ավանդս տան, քան այդ 2500 դրամը: Ես արդեն հույս էլ չունեմ, որ արդար քրտինքով հավաքած ավանդն ինձ մի օր կփոխհատուցեն, ինչ իմանամ՝ ինչքան կապրեմ: Ինձ 5-6 տարի առաջ են հերթագրել ու դեռ նոր ցուցակներ էլ չեն կազմելու, մինչեւ եղածների գումարները չվերադարձնեն: Իմ հարցումներին՝ ամեն անգամ ոլորտի պատասխանատուները վստահեցնում են, որ ամբողջ հերթագրվածների հազիվ 10 տոկոսին են հասցրել վճարել, ուրեմն շատ շատերը հաստատ այդպես էլ չեն ստանա իրենց ավանդները (մայրս 92 տարեկան է, մինչեւ հիմա նրան էլ չեն տվել այդ գումարը), ՀՀ կառավարությունը պատճառաբանում է, որ իրենք խորհրդային պետության համար պատասխանատու չեն եւ իրավահաջորդ չեն համարվում: Էդ դեպքում մենք ինչո՞ւ ենք Թուրքիայից պահանջում ճանաչել Ցեղասպանությունը. նրանց այսօրվա կառավարությունն էլ իրեն չի համարում Ցեղասպանություն իրականացրած կառավարության իրավահաջորդը»:

Մեզ դիմած թոշակառուների ներկայացմամբ՝ ամեն նախագահական կամ խորհրդարանական ընտրությունների ժամանակ թեկնածուները պարբերաբար շահարկում են ավանդները վերադարձնելու թեման, որպեսզի ընտրողներից ձայներ կորզեն. «Բայց ընտրվում են ու մոռանում մեր մասին էլ, ավանդների մասին էլ»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# Արաբկիրում բնակիչների ապօրինությունը շարունակվում է



Հունվարի 13-ի առավոտյան «Երեւան Ջուր» ընկերության 1-85 հեռախոսային կենտրոնում սկսեցին ահազանգեր ստացվել Արաբկիր վարչական շրջանից՝ անբավարար ջրամատակարարման վերաբերյալ:

Օպերատիվ կերպով իրականացված ստուգայցի արդյունքում պարզվեց, որ «Կովկասյան» օրվա կարգավորման ջրամբարի (ՕԿՋ) հարակից տարածքի դիտահորում անհայտ անձանց կողմից փակվել էր խոշոր տրամագծի ջրատարի փականը: Ավելին, փականը վնասվել էր, ինչի պատճառով լրացուցիչ դժվարություններ առաջացան ջրամատակարարման վերականգնման ժամանակ:

Ինչպես տեղեկացրեց «Արեւմուտք» շահագործման տնօրինության «Արաբկիր» տեղամասի գլխավոր ճարտարագետ Գաբրիել Մելիքսեթյանը, բնակիչների ապօրինության արդյունքում տուժել է մոտ 5000 բաժանորդ: Ներկայումս Գյուլբենկյան-Կիեւյան փողոցների հատվածի ջրամատակարարումը վերսկսվել է, սակայն համակարգում անհրաժեշտ ճնշում ապահովելու համար կպահանջվի որոշակի ժամանակ, որից հետո միայն նշված տարածքում կվերականգնվի գործող ժամանակացույցը:

Հաշվի առնելով, որ Արաբկիրում նմանատիպ դեպքերը հաճախակի են դարձել, «Երեւան Ջուր» ՓԲԸ-ն կոչ է անում բնակիչներին զերծ մնալ ինքնագործունեությունից եւ հիշեցնում օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության մասին՝ ջրամատակարարման համակարգի բնականոն գործունեությանը խոչընդոտելու համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ
հաղորդակցության բաժին



Առավոտ aravot daily
ՇԱԲԱԹ 14.01.2012

# Կալանավորը ներում է հայցում ՀՀ նախագահից

## 3 անչափահաս երեխաների եւ հաշմանդամ կնոջը չի կարողանում խնամել

Սամվել Սերյոժայի Չոբանյանն ունի 3 անչափահաս երեխա, կինը 2-րդ խմբի հաշմանդամ է: Չոբանյանը մեկ տարուց ավելի է՝ կալանավորված է: Մեղադրվում է թմրամիջոցներ օգտագործելու եւ տարածելու համար: Դեռ 6 տարի էլ պետք է մնա բանտում: Չոբանյանների ընտանիքն ապրում է ծայրահեղ աղքատության պայմաններում: Ընտանիքում գումար վաստակողը հենց Սամվելն էր: Նա տաքսի էր վարում եւ օրավարձով մի փոքր սնունդ գնում, իսկ ընտանիքն այսօր այլեւս եկամուտ չունի եւ չի կարողանում ապրել:

Նա կալանավայրից նամակով դիմել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին եւ ներում է հայցել: Նամակում մասնավորապես գրել է. «Ես ընտանիքիս խնամակալն եմ: Փոքր տղաս՝ Սերոժիկը, ընդամենը 3 տարեկան է, Մարիաննաս՝ 11, իսկ Ռոբերտս՝ 13: Սեփական տուն չունենք: Ընտանիքս ապրում էր Կոնդ թաղամասի 213 հասցեում՝ կիսախարխուլ 1-սենյականոց տնակում, որտեղ կենցաղային նվազագույն պայմանները նույնիսկ ապահովված չէին՝ բաղնիք, զուգարան չկար, պատուհանները կոտրտված էին, միայն 4 պատն էր եւ ստվարաթղթով ամրացրած կտուրը: Այստեղ մեզ ընկերս էր ժամանակավորապես տեղավորել: Տեղ չունեինք, ո՞ւր գնայինք: Հիմա արտասահմանից մի բարի հոգեւորական ընտանիքիս տեղավորել է փոքր-ինչ բարվոք վիճակում գտնվող տանը, վարձն ինքն է տալիս: Մնացած հարցերը մնացել են օդից կախված: Երեխաներս ուտելու բան չունեն, հագուստ չունեն: Եթե ազատության մեջ լինեի, կաշխատեի, մի բան կանեի, կապրեինք: Սիրտս վատառողջ է, այլեւս չեմ կարողանում այս պայմաններում մնալ, մանավանդ որ՝ ես մեղավոր չեմ: Իմ գլխին ուղղակի սարքեցին: Ես ուրիշի մեղքը վրաս վերցրեցի եւ դատվեցի 7 տարով: Ես լավ հայր եմ երեխաներիս համար, հոգատար ամուսին՝ կնոջս համար: Հարեւաններս ու կինս կարող են հավաստիացնել: Խնդրանքով դիմում եմ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, որ ներում շնորհի ինձ: Ես հիմա Արթիկում եմ»:


Նելլի Գալստյանը հույս ունի, որ ՀՀ նախագահը ներում կշնորհի իր ամուսնուն:

Նշենք, որ նման նամակ պատրաստել էին նաեւ հարեւանները եւ ուղարկել նախագահական նստավայր: Հարեւանները գրել էին, որ Սամվել Չոբանյանը խելոք եւ բարոյական հատկանիշներով օժտված մարդ է. «Կոնդում ապրող Սամվելի հարեւանների անունից դիմում ենք խնդրանքով եւ հույսով, որ օգնություն լինի Չոբանյանների ընտանիքին եւ ներում շնորհվի Սամվելին: Խնդրում ենք ներողամիտ լինել նրա նկատմամբ, քանի որ նա, հանուն իր զավակների եւ կնոջ, անգամ կյանքը չի խնայի: Ընտանիքի վիճակն էլ ծայրահեղ է»:

Սամվելի կինը՝ Նելլի Գալստյանը, չի կարողանում աշխատանք գտնել, չի կարող աշխատել, մանկական պարալիչ է տարել, վերջերս էլ մի անգամ ուղեղի արյան զեղում է ունեցել: Նա տարբեր ատյանների է դիմել, որպեսզի իրեն օգնություն տրվի, անգամ պատրաստ է եղել ողորմություն խնդրելու, որպեսզի երեխաներին օգնի, սակայն ոչինչ նրանց վիճակը չի բարելավել:

Նելլիի խոսքերով, իրենք ժամանակին Աջափնյակում տուն ունեցել են, պարտքերի պատճառով եւ սոցիալական պայմաններից ելնելով՝ վաճառել են. «Դա հորս տունն էր, վաճառեցինք, որ կարողանանք ապրել, երեխաների համար ուտելիք առնենք: Մի քիչ էլ բավականացրեց, որ վարձով ապրեինք, բայց այդ գումարն ի վերջո վերջացավ: Մնալու էինք դրսում: Լավ է՝ բարեգործներ կան, եւ մենք այս տունը կարողացանք վարձել, բայց առանց ամուսնուս՝ երեխաներին չեմ կարողանում պահել: Ամուսինս տաքսի էր վարում, մի փոքր գումար էր աշխատում, գոնե հաց էինք կարողանում առնել, երբ արդեն նստած է, ապրում ենք հարեւանների տված սնունդով»: Կինն էլ է հավատում, որ իր ամուսինն իրականում մեղավոր չէ. «Տաքսու մեջ թմրամոլներ են նստել, իրենց թմրանյութը թողել են մեքենայի մեջ, ոստիկաններն էլ բռնել են: Նա նախկինում դատվածություն ունի, գողություններ է արել, հիմնականում սնունդ է գողացել, որպեսզի ապրենք, հաստատ թմրանյութ չէր լինի նրա մոտ: Ամբողջ Կոնդը կարող է ասել, որ իմ ամուսինն այդպիսի բան չէր անի, ես բազմիցս նամակներ եմ գրել ոստիկանություն, բայց ոչինչ չի փոխվել: Հույս ունեմ, որ նրա նամակից հետո ինչ-որ բան կփոխվի եւ նրան ներում կշնորհվի՝ գոնե մեր վիճակը հաշվի առնելով»:

ԱՆՈՒՇ ԽԵՉՈՅԱՆ

# Լեռնապատի համայնքապետը «Հետքի» թղթակցից մեկ լումա է պահանջում

## Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում, Վարդուհի Հովնանյանի նախագահությամբ, շարունակվում է Լեռնապատ համայնքի ղեկավար Վանո Եղիազարյանի հայցադիմումի քննությունը ընդդեմ «Հետք» թերթի լրագրող Ադրինե Թորոսյանի:

Համայնքապետը թղթակցին մեղադրում է իր պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավը արատավորելու մեջ:

Նախնական դատական նիստի սկզբում հայցվոր Եղիազարյանը ողնեց հայցադիմումը՝ պահանջելով զրպարտության համար պարտավորեցնել պատասխանող լրատվամիջոցին հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները, վիրավորելու համար նույն թերթով ներողություն խնդրել իրենից եւ լրագրողից հօգուտ իրեն բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաեւ դատական ծախսերը:



«Միանշանակ հերքում եմ, որ վիրավորել ու զրպարտել եմ գյուղապետին, իրականում նա գումարային պահանջ ներկայացրել է տվյալ բնակչին, այլ բան է, որ իմ հոդվածում չեմ մասնավորեցրել, որ գյուղապետը երեք անգամ է դատական հայց ներկայացրել. առաջին երկու անգամները՝ գումարային պահանջով, երրորդ անգամ արդեն հանել է՝ բավարարվելով միայն ներողությունը եւ հերքում ձեւակերպումներով: Միգուցե բացթողում է, որ չի կոնկրետացվել, բայց դա էլ կարելի էր հեշտությամբ շտկել՝ առանց դատական քաշքշուկների: Նույն ինքը՝ գյուղապետը, կարող էր պատասխան տեքստով կամ անհամաձայնությամբ այդ մասին տեղյակ պահել խմբագրությանը, որպեսզի այդ բացթողումը ուղղվեր»,- ասում է Ադրինե Թորոսյանը:

Նախորդ տարվա օգոստոսի 23-ին «Հետքում» տպագրված «Գյուղապետի հասցեին ասված «արածել» բառն արժե 1 միլիոն դրամ» վերնագրով հոդվածում Ադրինե Թորոսյանը գրել էր, որ Լեռնապատի համայնքապետը ֆինանսական փոխհատուցում է պահանջում համագյուղացի Գեւորգ Մելքոնյանից:

Վանո Եղիազարյանը, սակայն, չի պահանջել ֆինանսական փոխհատուցում:

Լեռնապատցի Գեւորգ Մելքոնյանը պարտավորվել էր «Ժամանակ» թերթում հրապարակավ ներողություն խնդրել, ինչպես նաեւ նույն թերթի միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն գնահատված տվյալները: Բացի այդ՝ Գեւորգից հօգուտ գյուղապետի դատարանը որոշում էր կայացրել բռնագանձել 8000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Համայնքապետը 3 անգամ էր դիմել դատարան՝ նյութական պահանջ ներկայացրել 1-ին եւ 2-րդ հայցադիմումներում: 3-րդ հայցից համայնքապետը հանել էր նյութական պահանջը:

Պատասխանողի ներկայացուցիչ, փաստաբան Լուսինե Հակոբյանը դատարանին ներկայացրեց «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից հանված Վանո Եղիազարյանի կողմից Գեւորգ Մելքոնյանի դեմ ներկայացված առաջին եւ երկրորդ հայցադիմումները:

Այնուհետեւ Վանո Եղիազարյանը դատարանին հայտնեց, որ ցանկանում է հայցապահանջը որոշ մասով փոխել:

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատասխանողը եղել է իմ ուսանողը եւ միաժամանակ լրագրող է, հաշվի առնելով նաեւ նրա նյութական վիճակը եւ այն հանգամանքը, որ ես սույն հայցը գումար վաստակելու համար չեմ ներկայացրել, պարզապես դրամական մասով իմ պահանջը փոխում եմ՝ դարձնելով 1 լումա»:

Փոփոխված հայցադիմումին պատասխան ներկայացնելու համար ժամանակ տրամադրելու նպատակով դատարանը նիստը հետաձգեց մինչեւ փետրվարի 14-ը:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ

Վանաձոր

## Կենսաթոշակների յուրացում տեղի չի՞ ունեցել



Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Մուշեղ Հարությունյանի նախագահությամբ, ընթանում է շարունակաբար, միասնական դիտավորությամբ կենսաթոշակառուների գումարները յուրացնելու, առեւտրային կաշառք ստանալու եւ պաշտոնական փաստաթղթեր կեղծելու եւ օգտագործելու մեջ մեղադրվող վանաձորցի Շողիկ Վարդումյանի դատաքննությունը:

Դատական նիստի ժամանակ մեղադրող Արթուր Պողոսյանը ընթերցեց տուժողների եւ դատարանում նրանց ներկայացուցիչների նախաքննական ցուցմունքները, քանի որ նրանց մեծ մասը այս պահին գտնվում է ՌԴ-ում կամ էլ առողջական խնդիրների պատճառով չի կարող ներկայանալ դատարան:

Տուժող Զեմֆիրա Մաթեւոսյանի նախաքննական ցուցմունքի համաձայն՝ իր ՌԴ-ում գտնվելու ժամանակ Շողիկ Վարդումյանը, առանց իրեն տեղյակ պահելու, ստորագրել ու ստացել է 2010 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների իր կենսաթոշակը՝ 61.908 ՀՀ դրամ:

Ա. Բ.

Մանրամասները կարդացեք հաջորդ համարում




Սկիզբը 187, 192, 197, 202, 207, 212, 217, 222, 227, 232, 237, 242, 247-ում:

## Գլուխ տասնչորսերորդ

# ՀԻՍՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Ես չէի կարող հարմար առիթ չփնտրել ու չգտնել հիշելու՝ ինչպես էր Մանսուրյան Տիգրանը ձեր խոնարհ ծառայի բանաստեղծությունը բարձրաձայն ընթերցում, եւ ես իր էդ բարձրաձայն ընթերցումների ընթացքում ինքս ինձնից հնարավորինս գոհանում էի եւ նույնիսկ հաճույք էի ստանում տվյալ բանաստեղծությունիցս, որովհետեւ Տիգրանն իր ընթերցմամբ տվյալ բանաստեղծությանս մեջ ներդնում ու ներարկում էր էնպիսի զգացմունքներ ու իմաստներ, որոնք ժամանակին զլացել էի ներդնել էդ, ուրեմն, սովորական ու հերթական բանաստեղծությանս մեջ, մինչդեռ Տիգրանի ընթերցմամբ էդ սովորականս ու հերթականս էնպես էր իմաստավորվում ու արժեքավորվում, որ Տիգրանի ընթերցանության ընթացքում մեջս ահագին ուռում էի եւ Տիգրանի ընթերցումից հետո էլ ահագին ժամանակ էդպես ուռած ու փքված էի մնում, բայց ուռելով ու փքվելով՝ հընթացս նաեւ հասկանում ու մտածում էի, որ եթե Տիգրանը բանաստեղծություն գրեր, բոլորիցս էլ լավ կգրեր, եւ հիմա էլ եմ էդպես մտածում ու կարծում, եւ հիմա էլ էդպես մտածելով՝ կարծում եմ, որ ճիշտ ժամանակին ու անհրաժեշտաբար բանաստեղծություն գրելը թարգեցի, բայց, այդուհանդերձ, երեւի ճիշտ եմ անում, որ ժամանակ առ ժամանակ բանաստեղծական անցյալս ու բանաստեղծություններս էսպես հիշելով հիշեցնում եմ, եւ շատ էլ լավ ու շատ էլ ճիշտ եմ անում, որ չուզողներիս աչքը հանելով՝ էսպես ժամանակ առ ժամանակ հիշում ու հիշեցնում եմ, եւ ամենակերեւորն էն է, որ դրա բարոյական իրավունքն էլ ունեմ, որովհետեւ ես հրապարակավ ընդամենը խոստացել եմ այլեւս բանաստեղծություն չգրել, եւ խոսքը միանգամայն նոր բանաստեղծությունների մասին է եղել, իսկ ինչ վերաբերում է հներին, ես միշտ էլ ինձ իրավունք եմ տալու հիշել ու առիթով եւ նույնիսկ անառիթ էսպես երկարբարակ մեջբերել դրանք՝ չուզողներիս աչքերը հանելով, ուզողներիս ուրախացնելով եւ մնացածներին զվարճացնելով, որովհետեւ եթե վերոբերյալ բանաստեղծությունս էն ժամանակ Տիգրանին դուր էր գալիս, շատ հնարավոր է՝ էսօրվա օրով ուրիշներին էլ դուր գա եւ նույնիսկ հաճույք պատճառի. այսինքն, սրանից յոթ տարի առաջ գինովցած վիճակում Իսրայելյան Աննային հարցազրույց տալով եւ հրապարակավ խոստանալով այլեւս բանաստեղծություն չգրել՝ առ էսօր էլ էդ խոստումիս տեր եմ, որովհետեւ հիմա՝ միանգամայն սթափ վիճակում էլ եմ համարում, որ հիսունն անց մարդու համար բանաստեղծություն գրելն առանձնապես լուրջ զբաղմունք չի, եւ չնայած էդ առումով բացառություններ եղել են, այսինքն՝ եղել են բանաստեղծներ, որոնք հենց հիսունից հետո են սկսել բուն ստեղծագործել, էդ բացառությունները՝ Համո Սահակիչով սկսած եւ ուրիշներով վերջացրած, էնքան քիչ են, որ օրինաչափություն չեն դառնում, բայց էս ասածս հատկապես սովետական շրջանի մեր բանաստեղծներին չի վերաբերում, որովհետեւ Սովետը հատկապես բանաստեղծներին էնքան ճոխ ու գյուռ-գյուռ հոնորարներ էր տալիս, որ էն ժամանակներում միայն հիմար մարդը բանաստեղծություն գրելը կթարգեր, եւ չէին էլ թարգում, եւ եթե մերոնք հիմա էլ են հիսունից հետո բանաստեղծություն գրելը շարունակում, դա ընդամենը սովետական սովորույթի ու իներցիայի հետեւանքն է, որովհետեւ տողի դիմաց թեկուզեւ ընդամենը մի անգամ երկու ռուբլի ստացած բանաստեղծին հետագայում չափազանց դժվար է բանաստեղծությունից ու պոեզիայից հեռու պահել, էլ չեմ խոսում սովետահայ էն բանաստեղծների մասին, որոնք իրենց ողջ գիտակցական կյանքի ընթացքում են ճոխ հոնորարներ ստացել, ընդ որում՝ տողի դիմաց ոչ թե երկու ռուբլի, այլ՝ կրկնապատիկ եւ նույնիսկ եռապատիկ, եւ հիմնականում էդ էր պատճառը, որ սովետական բանաստեղծները հարգանքի մեջ կորած էին՝ ի տարբերություն հիմիկվա բանաստեղծների, որոնք տողի դիմաց ոչ միայն որեւէ վարձավճար չեն ստանում, այլեւ չեն էլ հասկանում, որ տողի դիմաց որեւէ վարձավճար չեն ստանում, եւ էդ պարզ ու հասարակ իրողությունը չհասկանալով ու չգիտակցելով՝ հիսունից հետո էլ նույն ոգով ու նույն ավյունով շարունակում են չափածո ստեղծագործել, եւ չեմ կարող ասել թե՝ հիսունից հետո առանձնապես թույլ են ստեղծագործում, որովհետեւ նախքան հիսունն էլ մի բան չէին, եւ վերջերս տեղի ունեցած մի միջադեպ հիշելով՝ անմիջապես ուզում եմ վերջ տալ բանաստեղծների ու բանաստեղծության մասին էս իմաստակությանս, որովհետեւ ամեն անգամ, երբ ասում ու կրկնում եմ, որ իրեն հարգող մարդը հիսունից հետո չի նստի ու բանաստեղծություններ չի գրի, իմ սերնդակից ու ավելի ավագ բանաստեղծներից մեկնումեկն ի խորոց սրտի նեղանում է ինձանից, եւ նեղացողները բնականաբար նրանք են, որոնք հիսունից ու վաթսունից հետո էլ նույն ոգով ու նախկին ավյունով շարունակում են բանաստեղծել՝ առանց հաշվի առնելու, որ վաղուց էդ գործի դիմաց հոնորար տվող չկա, եւ որ ասում եմ՝ նույն ոգով ու նախկին ավյունով շարունակում են ստեղծագործել ու բանաստեղծել, ոչ միայն էդ անկոտրում ու երդվյալ բանաստեղծների գրած բանաստեղծությունների քանակությունը նկատի ունեմ, այլեւ իրենց գրած էդ, ուրեմն, բանաստեղծությունների բովանդակությունն ու էությունը, եւ եթե մի անգամ «Գրական թերթ» առնեք եւ ընթերցանության ենթարկեք վաթսունն ու յոթանասունն ու ութսունն անց էդ անկոտրում երդվյալների բանաստեղծական տվայտանքները, ինքներդ էլ կհամոզվեք, որ մանավանդ յոթանասունն ու ութսունն անց երդվյալները ոչ միայն նախկին ոգով ու նախկին ավյունով են ստեղծագործում ու բանաստեղծում, այլեւ նախկին ոգով ու նախկին ավյունով էլ սիրում ու սիրահարվում են եւ առաջվա պես «Գրական թերթի» ողջ տարածքն իրենցով են անում՝ երիտպոետների համար նախատեսված տարածքները ներառյալ, եւ չնայած «Գրական թերթ» կարդացողներն էսօր ակնհայտորեն քչություն են անում, եւ չնայած «Գրական թերթն» էլ բանաստեղծներին հոնորար չի տալիս, այդուհանդերձ, «Գրական թերթի» բանաստեղծական տարածքների համար պայքարը նախկին լարվածությամբ շարունակվում է, եւ վերստին էդ էլիտար տարածքներն ավագների կողմից են նվաճվում, եւ վերստին երիտասարդների բանաստեղծությունների համար «Գրական թերթում» տեղ չի ճարվում՝ բացառությամբ Գրողների միության ղեկավարության թրերի տակով անցածների, իսկ երիտպոետներից նրանք, ովքեր Հայաստանի Գրողների միության տեղը չգիտեն ու չեն էլ ուզում իմանալ, սողոսկում են Վիրլետի ժուռնալ ու ինտերնետ ու երբեւէ Գրողների միության անդամ չեն դառնում եւ իրենց մեղրամիսն էլ Ծաղկաձորի մեր ստեղծագործական տանը չեն անցկացնում, բայց դա ամենեւին չի նշանակում թե՝ պայմանականություններից ազատված ու ազատագրված են, որովհետեւ Վիրլետի շուրջ ու ինտերնետում հավաքվողներն էլ են բանաստեղծություն գրելով՝ բանաստեղծությունից ու պոեզիայից ակնկալում այն՝ ինչ պոեզիան չունի ու երբեւէ չի էլ ունենալու, եւ, խոսքը մեր մեջ, պետք էլ չի, որ երբեւէ ունենա, եւ եթե մի որոշ ժամանակ ունեցել էլ է, էդ ժամանակը, մեր մեջ ասած, միանգամայն հակաբնական, հակաբանական եւ նույնիսկ հակաբանաստեղծական ժամանակ էր, եւ ձեր խոնարհ ծառան էլ էդ ժամանակը տեսնելու ու էդ ժամանակից օգտվելու բախտն ունեցավ, եւ շատերի պես ինքս էլ բանաստեղծելու դիմաց բոլ-բոլ վճարվեցի, եւ նախքան Սովետի փլուզվելն իմ տողավարձն էլ երկու ռուբլուց անցավ, եւ որպեսզի ավելի լավ պատկերացնեք, պիտի համեմատելով ասեմ, որ էն ժամանակ բանաստեղծներս վարձատրվում էինք մոտավորապես էնպես՝ ինչպես հիմա ու բոլոր ժամանակներում գաջ քաշողներն են վարձատրվում. այսինքն, էնքան քառակուսի մետրի դիմաց՝ էնքան դրամ, եւ եթե փարդախ ես քաշում՝ անհամեմատ շատ են վճարում, եւ գաջ քաշողների ու էն ժամանակվա բանաստեղծներիս տարբերությունն էն էր, որ էն ժամանակվա բանաստեղծներս, ի տարբերություն գաջ քաշողների, ոչ թե քառակուսի մետրով էինք վարձատրվում, այլ՝ տողերի քանակությամբ, եւ պոեզիայի բնագավառի փարդախ քաշողներն էլ էին կրկնապատիկ ու եռապատիկ վարձատրվում, եւ բանաստեղծների մեր համայնքում ամենից լավ ու ամենից որակով փարդախ քաշողն անվիճելիորեն Վահագն Դավթյանն էր, եւ, կարող եմ ասել, ես էլ էի գործս խղճով ու նամուսով անում, եւ չնայած կարճ ու երկար տողերի համար բանաստեղծներիս նույն գինն էին տալիս, ես, ի տարբերություն ոմանց, երբեւէ արհեստականորեն չկարճացրի տողերս, եւ չնայած հանգավոր ու անհանգ տողերն էլ էին հավասար գնահատվում, ես գլուխ չէի պահում եւ չարչարվելով հանգավորում էի գրեթե բոլոր տողերս. այսինքն, ես երբեւէ պետության ու խորհրդային իշխանությունների հոգատարությունը չչարաշահեցի եւ, կարող եմ ասել, հնարավորինս գնահատված ու պաշտպանված

Առավոտ
aravot daily
ՇԱԲԱԹ 14.01.2012

էի պետության կողմից եւ նույնիսկ Լենինյան կոմերիտմիության մրցանակի դափնեկրի կոչմանն արժանացա, եւ չնայած էդ մրցանակին Շառոյան Ռոլանդի հետ կիսովի արժանացանք, եւ չնայած էդ մրցանակի հինգ հարյուր ռուբլին էլ իմ ու Ռոլանդի մեջ հալալ կիսվեց, այդուհանդերձ, ես էն ժամանակ էլ ու հիմա էլ ինձ Լենինյան կոմերիտմիության մրցանակի լիարժեք դափնեկիր եմ համարել ու համարում, եւ կոմսոմոլի դափնեկիրներից թերեւս միակն եմ, որ առանց ամաչելու՝ տեղին ու անտեղի հիշում ու հիշատակում եմ կոմսոմոլի մրցանակի դափնեկիր լինելս, մինչդեռ կոմսոմոլի որոշ դափնեկիրներ ճարպկորեն հասարակությունից թաքցնում են իրենց իսկ կենսագրության էդ, ուրեմն, կոմերիտական էջը, եւ թաքցնողները հիմնականում կոմսոմոլի էն դափնեկիրներն են, որոնք Սովետի օրոք իրենց անունն ու ազգանունն էդ մրցանակի անունից առանձին չէին գրում, եւ ես էն քչերից եմ, որ Սովետի օրոք կոմսոմոլի դափնեկիր լինելս չէի նշում ու չէի շեշտում, ու երբեւէ գրածներիս տակ անվանս ու ազգանվանս կողքին չեմ գրել՝ Լենինյան կոմերիտմիության մրցանակի դափնեկիր, եւ հիմա, երբ արդեն ուրիշներն են իրենց կոմսոմոլի դափնեկիր լինելը շրջապատից ու հասարակությունից թաքցնում, մեջս բուռն ցանկություն է առաջանում հասարակությանն ու բոլորին պարբերաբար իրազեկել, որ ձեր խոնարհ ծառան Լենինյան կոմերիտմիության դափնեկիր է, բայց էդ բանը չեմ անում ոչ թե էն պատճառով, որ Ռոլանդի հետ կիսովի եմ դափնեկիր եւ, ի տարբերություն այլոց, հինգ հարյուր ռուբլու փոխարեն ընդամենը երկու հարյուր հիսուն եմ ստացել, այլ ընդամենն էն պատճառով, որ ես վաղուց էս վեպիցս բացի այլ բան չեմ գրում, որի տակ ստորագրեի՝ Արմեն Շեկոյան, Լենինյան կոմերիտմիության դափնեկիր, եւ վաղուց հրապարակախոսական ու բարոյախրատական հոդվածներ էլ չեմ գրում, որոնց տակ էդ ձեւով ստորագրեի, եւ միակ բանը՝ որ գրում եմ, էս շարաբաստիկ վեպս է, որի շրջանակներում փորձում եմ ամեն ինչ հիշել ու նշել՝ ներառյալ Լենինյան կոմերիտմիության դափնեկրությունս, որովհետեւ եթե ժամանակին Սովետն ու կոմերիտմիությունն առանց ամաչելու էդ մրցանակն անձամբ նվաստիս են շնորհել, հիմա նվաստս բարոյական որեւէ իրավունք չունի ամաչելու, որ ժամանակին առանց ամաչելու սովետական իշխանություններից ու կոմերիտմիությունից էդ մրցանակն ընդունել ու վերցրել է, ընդ որում՝ կիսովի ու կես գնով, եւ չնայած էդ մրցանակը Ռոլանդի հետ կիսովի ընդունեցինք ու ստացանք, էդ մրցանակի համար ամբողջովին ու ամբողջապես եմ պատասխանատվություն ստանձնում ու կրում, եւ չնայած էդ մրցանակին արժանացած «Բախտ» ժողովածուիս մեջ կոմսոմոլին նվիրված որեւէ ոտանավոր չկար, էդ ժողովածուս միանգամայն արժանի էր էդ ու ավելի երեւելի մրցանակների, որովհետեւ էդ ժողովածուիս մեջ ընդգրկված «Ծիծաղելով, փորս բռնած» բանաստեղծությունն էնքան էր դուր եկել Տիգրան Մանսուրյանին, որ Տիգրանն ամեն անգամ էդ ժողովածուս իրենց ննջարանի գրապահարանից հանելով՝ անմիջապես գտնում էր էդ բանաստեղծությունս ու սկսում էր բարձրաձայն ընթերցել այն՝ փորձելով ինձ համոզել ու հավատացնել, որ իսկապես լավ բան եմ գրել, եւ ես իսկապես համոզվում ու հավատում էի, որովհետեւ Տիգրանն էնքան սիրով ու էնքան բովանդակալից էր ընթերցում, որ իր ընթերցանության ընթացքում էդ բանաստեղծությունս նորանոր երանգներ եւ նույնիսկ նորանոր իմաստներ էր ստանում, եւ ամեն անգամ իմ էդ «Բախտն» իրենց ննջարանի գրապահարանից հանելով՝ էնքան արագ ու էնքան հեշտությամբ էր էդ բանաստեղծությունս գտնում, որ ամեն անգամ ուղղակի ապշում էի, եւ մի օր պատահաբար նկատեցի, որ գրքիս էդ էջը ծալված էր, եւ դա նշանակում էր, որ Տիգրանն իմ բացակայությամբ էլ էր էդ գիրքս իրենց ննջարանի գրապահարանից հանելով՝ էդ բանաստեղծությունս մեկուսի կարդացել, եւ շատ հնարավոր է՝ ուրիշների համար էլ էդ բանաստեղծությունս կարդացած լինեն, որովհետեւ Տիգրանն էնքան շատ էր պոեզիա սիրում, որ ուրիշներին էլ էր ուզում հաղորդակից դարձնել իր սիրած բանաստեղծություններին, եւ հիմա էսպես հետին թվով հիշելով ու մտածելով՝ սկսում եմ հասկանալ նաեւ, որ եթե Տիգրանը մեծ կոմպոզիտոր դառած չլիներ, հաստատ շատ մեծ բանաստեղծ էր դառնալու, որովհետեւ իր համար բանաստեղծությունն ու երաժշտությունը նույնն էին, եւ ինքն էդ երկուսն էլ հավասարապես էր սիրում, եւ հիմա իրեն հիշելով եւ իր մասին մտածելով՝ սկսում եմ նաեւ հասկանալ, որ եթե ինքը բանաստեղծ լիներ, բանաստեղծություն գրելը երբեւէ չէր թարգի՝ էնքան որ խորապես ու ի խորոց սրտի էր պոեզիա սիրում ու պոեզիայով ապրում, եւ չնայած իր մասին էսպես անցյալ ժամանակով եմ խոսում, համոզված եմ, որ ինքն էսօր էլ է պոեզիայով ապրում ու շնչում, եւ այլ կերպ չի էլ կարող լինել, որովհետեւ Տիգրանն ինքն ուղնուծուծով պոեզիա է, եւ հիմա Տիգրանի ու պոեզիայի մասին մտածելով՝ սկսում եմ հասկանալ նաեւ, որ, այնուամենայնիվ, իմ ու պոեզիայի առնչությունը զուտ պատահականություն է եղել, այլապես՝ էդքան հեշտությամբ ու էդքան հաջողությամբ պոեզիայից չէի հրաժարվի, եւ էդ բանը նույնիսկ չէի պատկերացնի՝ ինչպես որ Տիգրանին պոեզիայից անջատ չեմ կարողանում պատկերացնել, մինչդեռ անձամբ ինձ ոչ միայն կարողացա պոեզիայից անջատ պատկերացնել, այլեւ, ինչպես տեսնում եք, արդեն վեց ու յոթ տարի է՝ պոեզիայից անջատ ու պոեզիայից կտրված լավ էլ ապրում ու գոյատեւում եմ, չնայած, այնուամենայնիվ, երեւի խիղճս էնքան էլ հանգիստ չի, այլապես չէի հիշի՝ ինչպես էր Տիգրան Մանսուրյանն իրենց ննջասենյակի գրապահարանից հանում բանաստեղծություններիս «Բախտ» կոչվող ժողովածուն ու բարձրաձայն ընթերցում «Ծիծաղելով, փորս բռնած» բանաստեղծությունս, բայց, այսուհանդերձ, երեւի դուք էլ եք կռահում ու ենթադրում, որ էս հիշելս ու էս հիշողությունս ոչ էնքան պոեզիայի հանդեպ կարոտի արտահայտություն ու դրսեւորում է, ինչքան՝ ամենասովորական եսասիրության արտահայտություն ու դրսեւորում, որովհետեւ ամեն անգամ Տիգրանն իրենց ննջարանի գրապահարանից որեւէ բանաստեղծի որեւէ ժողովածու հանելով՝ բարձրաձայն ու անհուն սիրով ընթերցում էր դույն բանաստեղծի դույն բանաստեղծությունը, եւ հիմնականում էդ ընտրյալը Չարենցն էր լինում, ինչպես նաեւ՝ Նարեկացին, եւ ավելի հազվադեպ՝ Պաստեռնակը, Ախմատովան ու Բրոդսկին, եւ առավել հազվադեպ նվաստս էր էդ բախտին արժանանում, ավելի ճիշտ՝ էդ բախտին իմ «Բախտ» ժողովածուն էր արժանանում, իսկ ավելի ստույգ՝ իմ «Բախտ» ժողովածուի մեջ ընդգրկված էդ «Ծիծաղելով, փորս բռնած» բանաստեղծությունս, որն իրականում ոչ միայն իմ գրած լավագույն բանաստեղծությունը չի, այլեւ իմ էդ «Բախտ» կոչվող ժողովածուի լավագույն բանաստեղծությունը չի, մինչդեռ Տիգրանի ընթերցմամբ էդ բանաստեղծությունս իմաստավորվում ու վերաիմաստավորվում էր, եւ հեչ պատահական չի, որ իմ էդ բանաստեղծության Տիգրանի կատարումն էսքան երկարբարակ հիշում ու նկարագրում եմ, որովհետեւ մարդ արարածն ինչքան էլ պոեզիայից հեռացած ու խորթացած լինի, հիշողության մեջ սրբորեն պահում ու պահպանում է էն ամենը՝ ինչը պոեզիա է կամ պոեզիայի հետ որոշ ու որոշակի առնչություն ունի, եւ, դրանից էլ բացի, ժամանակի ընթացքում ինչքան էլ մարդ արարածը պոեզիայից հեռացած ու խորթացած լինի, ինքը իրենից ու մանավանդ իր անցյալից երբեւէ չի հեռանում. ավելին. մարդ արարածը ժամանակի մեջ ու ժամանակի հետ առաջանալով՝ մտովի անընդհատ հետ է գնում, որովհետեւ անցյալի էն տեղերն ու վայրերը՝ ուր մտովի ու անընդհատ վերադառնում է, գույնի ու ռելիեֆի առումներով դրախտին ավելի հար ու նման են, քան էն տեղը՝ ուր մարդ արարածը տվյալ պահին ապրում ու գոյատեւում է, եւ ինչքան էլ մարդ արարածը պոեզիայից հեռանա ու խորթանա, էլի ու վերստին պոեզիայի տիրույթներում ու տարածքներում է մնում, քանզի կյանք կոչվածը տեղով մեկ պոեզիա է՝ երբեմն գունեղ ու հրաշալի եւ երբեմն էլ՝ անգույն ու տաղտկալի, եւ նմանապես մահն է պոեզիա՝ երբեմն գունեղ ու հրաշալի եւ երբեմն էլ՝ անգույն ու տաղտկալի, եւ էս ամենից էլ բացի՝ պոեզիայից ու ամեն ինչից բացի, կյանքի պրոզան մշտապես եղել է, կա ու էս պահին էլ գոյություն ունի, եւ պրոզա ասելով՝ ամենեւին էլ իմ էս բազմահատոր պրոզան նկատի չունեմ, այլ այն, որ ես Մանսուրյան Տիգրանի էդ բարձրաձայն ու փառահեղ ընթերցումները հիշելով ու հիշեցնելով՝ հիշեցի ու հիշեցրի էդ ընթերցումներից էն մեկը, որն անձամբ ինձ ու իմ բանաստեղծությանն էր վերաբերում, մինչդեռ ճարպկորեն շրջանցեցի պոեզիայի էն նմուշները, որոնք Չարենցի ու այլ երեւելիների սրտերից ու գրիչներից էին բխել, իսկ ինչ վերաբերում է իմ էս բազմահատոր պրոզային, էս բազմահատորս ավելի շատ ու ավելի շուտ պոեզիա է, քան՝ պրոզա, որովհետեւ մարդ արարածն ինչքան էլ պոեզիայից հեռանա ու խորթանա, իրականում ավելի ու ավելի է մոտենում ու հարաբերվում նույն էդ պոեզիային, ու էս ասածս առաջին հերթին ինձ է վերաբերում, որովհետեւ էս հատորներիս լայնքով ու երկայնքով անընդհատ ու շարունակաբար հին ու անցած տեղերին եւ հին ու անցած ժամանակներին վերադառնալով ու անդրադառնալով՝ հին ու նախկին վայրերից եւ հին ու նախկին ժամանակներից պեղելով հայտնաբերում եմ այն՝ ինչը ներկա վայրերում ու ներկա ժամանակի մեջ գոյություն չունի, ու էն ամենը՝ ինչը ներկայի ու իրականության մեջ գոյություն չունի, միանշանակ պոեզիա է, չնայած լավ էլ գոյություն ունի՝ թեկուզեւ հիշողության կերպով ու հիշողության երանգներով, եւ էս պահի դրությամբ ինձ որեւէ մեկը չի կարող համոզել թե՝ հիշողությամբ վերապրածը պակաս կյանք է, քան այն՝ ինչը ներկա պահի մեջ ապրում ու գլորում ենք, եւ էս պահին ինձ որեւէ մեկը չի կարող համոզել թե՝ էն ամենը, որ հիշողության միջոցով ու հիշողության շնորհիվ ենք վերապրում, պակաս կյանք է, քան էն՝ ինչն անցյալում մի անգամ արդեն ապրել ու հիմա վերապրում ենք՝ հիշողության միջոցով ու հիշողության շնորհիվ, ու էն ամենը՝ որ հիշողության միջոցով եւ հիշողության շնորհիվ վերապրում ենք, հիմնականում պոեզիա է. այսինքն, ես էսքան հիշելով ու էսքան գրելով՝ հիմնականում պոեզիա եմ գրում, այլ ոչ թե՝ արձակ, եւ մեր պրոֆեսիոնալ արձակագիրները շատ էլ ճիշտ են անում, որ ինձ բանաստեղծ



են համարում, այլ ոչ թե՝ արձակագիր. այսինքն, իմ էս վեպը հիմնականում հիշողությամբ ու պոեզիայով է լեփլեցուն, այլ ոչ թե՝ իրականությամբ ու պրոզայով, եւ, փաստորեն, վեց ու յոթ տարի առաջ հրապարակավ ու ցուցադրաբար բանաստեղծություն գրելը թարգելով՝ ես առաջին հերթին ինքս ինձ եմ խաբել եւ հետո նոր միայն՝ ձեզ, որովհետեւ էս արձակ ու սանձարձակ հիշողություններս ավելի պոեզիա են, քան էն բանաստեղծությունս, որը զետեղված է «Բախտ» ժողովածուիս մեջ եւ որն իրենց ննջարանի գրապահարանից հանելով՝ Մանսուրյան Տիգրանը բարձրաձայն կարդում էր, եւ նույնիսկ Տիգրանի բարձրաձայն կարդալն էր ավելի բանաստեղծություն, քան իմ էդ հանգավոր տեքստը, որը Տիգրանը բարձրաձայն կարդում էր, եւ չնայած եսասիրաբար ու շահախնդրորեն եմ էսպես երկարբարակ հիշում ու նկարագրում Մանսուրյան Տիգրանի բարձրաձայն ընթերցանությունը, նույնիսկ էս հիշողությանս մեջ ավելի շատ պոեզիա կա, քան էն բանաստեղծությանս մեջ, որը Տիգրանն իրենց ննջարանի գրապահարանում հայտնաբերելով՝ բարձրաձայն, սիրով ու հավատով կարդում էր, եւ, փաստորեն, չարաչար սխալվում են բոլոր նրանք, ովքեր կարծում են թե՝ մի օր վերադառնալու ու վերստին բանաստեղծություն եմ գրելու, որովհետեւ ես, ինչպես տեսնում եք, բանաստեղծությունից ու պոեզիայից երբեւէ չեմ էլ հեռացել, որ վերադառնամ կամ չվերադառնամ, եւ հիմա որ էս ուղղությամբ ավելի ու ավելի եմ մտածում, սկսում եմ հասկանալ, որ բնության ու իրականության մեջ պոեզիայից հեռացած մարդ ընդհանրապես գոյություն չունի, որովհետեւ նա՝ ով մի անգամ պոեզիային առնչվել է, այլեւս պոեզիայից փախչելու տեղ չունի, եւ, ընդհակառակը, նա՝ ով երբեւէ պոեզիային չի առնչվել, այլեւս չի էլ առնչվելու, ու էս երկուսինն էլ հավասարապես ճակատագրեր են՝ միանգամայն իրարից տարբեր եւ իրար հակընդդեմ, եւ ի ծնե պոեզիային չառնչվածներն ի վիճակի չեն հասկանալ ճակատագրով պոետներին, եւ չնայած էս վերջիններն առաջիններին լավ էլ հասկանում են, եւ չնայած էս վերջինները ժամանակ առ ժամանակ ու երբեմն-երբեմն որոշում ու փորձում են փախչել ու ազատվել իրենց իսկ ճակատագրից, էդ բանը նրանց առանձնապես չի հաջողվում, որովհետեւ իսկական ու ճշմարիտ պոեզիան բանաստեղծություն գրելու կամ չգրելու հետ որեւէ կապ չունի, եւ առավել եւս կապ չունի հոնորարների եւ այլեւայլ վարձավճարների հետ, եւ երիցս կապ չունի զանազան մեդալների ու մրցանակների հետ:

Շարունակությունը՝ հաջորդ շաբաթ

# Ազգային հատկանիշ է. կամ հեռվում լինես, կամ մահացած, որ սկսեն վերագնահատել

## Կինոռեժիսոր Հարություն Խաչատրյանը հանրագումարի է բերում անկախության տարիների արվածն ու չարվածը:

Անկախության 20-ամյակի համատեքստում տարբեր ոլորտների մարդիկ սկսել են ի մի բերել, թե ինչ են տվել իրենց Անկախության 20 տարիները, ինչ են իրենք ստեղծել: «Ոսկե ծիրան» կինոփառատոնի գլխավոր տնօրեն, կինոռեժիսոր Հարություն Խաչատրյանն էլ «Առավոտի» հետ զրույցում փորձեց հանրագումարի բերել իր «բաժինը»:

«Քաղաքականության մասին չեմ ուզում խոսել, որովհետեւ դա իմ մասնագիտությունը չէ, գիտության մասին` նույնպես, գրականությանը ծանոթ ենք` շատ բան չի արվել, դրա համար կխոսեմ հատկապես կինոյի մասին: Շատերը կարծում են` կինոն մահացել է, ոմանց էլ թվում է` սերիալներ կան, դա բավական է, արդեն կինո է: Ինչ խոսք, էդ զվարճալի ժամանցները, որ նկարվում եւ ցուցադրվում են, վատ բաներ չեն` փորձի, մթնոլորտի, էկրանից հայերեն խոսք հնչեցնելու, հայկական պատմությունններ պատմելու, դերասանների զբաղվածության առումով: Ինչ-որ բաց տեղեր կան, որոնք պետք է լցնել: Այլ հարց է, որ բացի թվարկած մի քանի դրական բաներից, լիքը բացասական բաներ էլ կան` գռեհկությունը մատուցվում է որպես հումոր, վատ խոսքը` բնական անկեղծ խոսակցություն: Ցավալի է, որ ոչ պրոֆեսիոնալ մարդիկ են մտել ասպարեզ: Իսկ ի՞նչ եմ արել ինքս` կինոյում...Նկարել եմ 6 լիամետրաժ ֆիլմ, 1991 թվականից սկսած եմ ասում` «Վերադարձ Ավետյաց երկիր», «Վերջին կայարան», «Դոկումենտալիստը», «Պոետի վերադարձը», «Սահման», «Անվերջ փախուստ, անվերջ վերադարձ», որ հիմա ավարտում եմ: Ստացել եմ մոտավորապես 30 միջազգային մրցանակ` 20 տարում, կոչումներ, մեդալներ»,- նշեց ռեժիսորը: Նա կարծում է, որ ամեն դեպքում արված գործը քիչ է, եւ ընդհանրապես մեր կինոյում ազգային երեւույթների պակաս կա. «Երկրաշարժի մասին կարծես նկարել եմ, բայց ամբողջովին չեմ խորացել, Ղարաբաղյան պատերազմին, փախստականներին անդրադարձել եմ, բայց մի քիչ այլ ոճով: Ես այն արվեստագետներից եմ, որոնք իրավունք չունեն ոգեւորվելու եւ ուրախանալու եւ ինքն իրեն ծափ տալու: Շատ կան ծափահարող եւ գեղեցիկ արվեստ ստեղծողներ, իսկ ես ընտրել եմ ամենածանր ճանապարհը, նկարում եմ թերությունների մասին եւ իրավունք չունեմ թույլ տալու, որ այդ թերությունները, դժվարությունները, խնդիրները, ցավերը չնկատվեն»:



Հարություն Խաչատրյանն իրեն անվանում է կինոսոցիոլոգ, իսկ վերջին ֆիլմը` «Անվերջ փախուստ եւ անվերջ վերադարձը»` կինոուսումնասիրություն` Հայաստանին պատուհասած աղետների, ԽՍՀՄ-ի փլուզման եւ այլ պատճառներով հայրենիքից հեռացած տարբեր մարդկանց ճակատագրերի մասին:

Ռեժիսորը նշում է, որ նկարում է առանց քննադատելու իր հերոսներին կամ նրանց նկատմամբ վերամբարձ դիրք գրավելու: Նրա համոզմամբ, ամեն ոք թող ինքը եզրակացություն անի` ինչո՞ւ է մեր ազգը անվերջ փախչում եւ անվերջ վերադառնում: «Չեմ ուզում միայն փախչողների եւ վերադարձողների մասին լինի ֆիլմը, ոչ ուզում եմ ստորաբար սեւացնել պատմությունը, ոչ էլ` հիմարաբար գունազարդել, չարախոսել ընդհանրապես չեմ ցանկանում, որովհետեւ բոլոր այդ մարդիկ ինձ համար սիրելի են` իրենց դժբախտ ճակատագրերով հանդերձ: Նկարել եմ տարբեր բաներ` սկսած Լոս Անջելեսի նարկոդիսպանսերի հայ հիվանդներից ու բանտ նստածներից, վերջացրած օտար ափերում գտնվող գերեզմաններով, որտեղ 100 հազարավոր հայերի շիրիմներ են կողք կողքի: Այսինքն, խորհելու առիթ ենք ուզում տալ` ամեն մարդ պատճառը կգտնի, թե ինչո՞ւ են գնում ու վերադառնում: Շատ համարձակ պետք է լինես, հիմար կամ էլ ամենաքիչը սուրբ, որպեսզի իրավունք ունենաս մեկի արարքին գնահատական տալ: «Անվերջ փախուստ եւ անվերջ վերադարձը» ավարտին կհասցվի այս տարվա աշնանը:

Իմ ֆիլմերի մեջ, կարծում եմ` պետք է աստվածավախությունը լինի, իրավունք չունենաս մարդուն ոչ ցեխոտել, ոչ էլ փայլեցնել, որովհետեւ ճշմարտությունն է ֆիլմին հարատեւությունը ապահովում: Շատերը կարծում են, թե Հարությունը նկարում է փառատոնային ֆիլմեր, բայց դրանք հասարակ ֆիլմեր են` գյուղացու, բանվորի, ոչխարապահի, փախստականի մասին: Շատերն ասում են` ամոթ է, որ նման ֆիլմերը ներկայացնում են Հայաստանը, բայց դա շատ նաիվ կարծիք է, որովհետեւ մենք իրականում լաքապատված ազգ չունենք, եւ պետք էլ չի, որ ունենանք: Ընդամենը կան լաքապատված մարդիկ, որոնց լաքը խանգարում է բաց մաշկով զգալ ազգի կենսառիթմը, սրտի բաբախյունը, պրոբլեմներն ու դարդը: Լաքապատված մարդիկ շատ կան նաեւ արվեստում, անընդհատ մեջ են ընկնում, երեւում են եթերում, ամենուր, հետ են մղում դարդից խոսողներին»,- փաստում է ռեժիսորը:

Նա զգուշացնում է. «Իմ ֆիլմերը սկզբից դժվար են ընկալում` մարդիկ ցանկություն չունեն տխրելու, մտածելու կամ անհանգստանալու, որովհետեւ միտված են դեպի շոուն, իսկ իմ ֆիլմերը մեկ-մեկ կարող են կոկորդին կանգնել կոշտ կերակուրի նման»:

Ի վերջո ամփոփելով Անկախության տարիներին արվածը` Հարություն Խաչատրյանը կարծում է, որ եթե ոչ գերազանց, ապա 4 հաստատ վաստակել է: Ապացույցը` 6 լիամետրաժ ֆիլմերը, 30 եւ ավելի կինոմրցանակները, 9 երեւանյան միջազգային կինոփառատոները, դեբյուտային ֆիլմերի «Մերոնք» ստուդիան ու դեբյուտների փառատոնը, որ կարճ կյանք ունեցավ «մութուցուրտ» տարիներին, բազմաթիվ սցենարները, 4-5 գրքերը, թերթը, կինոդպրոցը, 3 զավակներն ու 2 թոռները:

Հարություն Խաչատրյանի եզրակացությունը հետեւյալն է` «Ինչքան գործ ես արել, այդքան էլ կա անելու, Հայաստանը դեռ այն կինոն չունի, որ ինքնուրույն կարողանա աշխարհ մտնել եւ ճանաչվել, որովհետեւ, եթե չլինեին Փարաջանով եւ Փելեշյան, հայկական կինոյի մասին ավելի քիչ կիմանային աշխարհում: Իհարկե շատ լավ ռեժիսորներ ունենք, որոնք ժամանակին չեն ռեկլամվել, մինչդեռ ուրիշ ազգերը, օրինակ` վրացիները, ամենափոքրիկ դիպլոմ ստացած ֆիլմը դարձնում են երեւույթ, ռեժիսորին էլ կերպար` Մոսկվայի ու Բեռլինի համար: Իսկ մեր ազգի մեջ արվեստագետներին իրենց տեղը դնելու միտում կա: Մի կողմից դա շատ լավ է, որ չմեծամտանան, որովհետեւ հայ արվեստագետները մեծամտանալու հիվանդություն ունեն, մյուս կողմից էլ` ախր եղածը չեն փայփայում, չեն թողնում կայանա: Ազգային հատկանիշ է, միշտ պետք է կամ հեռվում լինես, կամ մահացած, որ սկսեն վերագնահատել...»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

## Բուհերի պատը կքանդեն ԿԳ նախարարի ներկայությամբ

Հունվարի 16-ին, «Կրթությունն առանց սահմանների» կարգախոսի շրջանակում, կքանդվի Երեւանի ճարտարապետության եւ շինարարության ու Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանները (ՀՊՃՀ) միմյանցից տարիներ շարունակ անջատող խորհրդանշական պատը: ԿԳՆ լրատվական ծառայությունից տեղեկացանք, որ միջոցառմանը կմասնակցի նույնիսկ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Aravot.am-ը ՀՊՃՀ ռեկտոր Արա Ավետիսյանից հետաքրքրվեց` ինչո՞ւ որոշեցին նման քայլի գնալ, այն էլ հանդիսավորությամբ: «Մենք կարծում ենք, որ կրթական բոլոր ռեսուրսները պիտի անջրպետներ չունենան, այսպես ասած սիմվոլիկ` «Կրթություն առանց սահմանների»,- ասաց ռեկտորը: Մեր հարցին` իսկ ի՞նչ են տալիս այդ սիմվոլիկան եւ ձեւականությունը, ի վերջո Բեռլինյան պատը չի քանդվում, պարոն Ավետիսյանը պատասխանեց. «Անձամբ ես հունվարի 16-ին հատուկ հետեւելու եմ արարողությանը: Մենք ենթակառուցվածքներ ունենք, որոնք ուզում ենք համատեղ օգտագործել, օրինակ, թեկուզ ընդհանուր գրադարան: Որպեսզի մի բուհի ուսանողը գա գրադարան, ստիպված պետք է դուրս գա իր բուհից, ներս մտնի մյուս բուհ, որ օգտվի: Ճիշտ է, պատը որպես պատ այնքան էլ դուր չի գալիս շատերին, բայց խորհրդանշական ինչ-որ բան է»,- պատասխանեց Արա Ավետիսյանը:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# «Թագավորական» կոմպոզիտորի CD-ն կներկայացվի Հայաստանում

Մասնավոր այցով Հայաստանում է լոնդոնաբնակ երգեհոնահար, դաշնակահար, կոմպոզիտոր Արթուր Բոբիկյանը: «Առավոտի» հետ զրույցում երաժիշտը հայտնեց, որ օրերս «Նարեկացի» մշակութային կենտրոնում կկայանա իր 5-րդ CD-ի շնորհանդեսը: Ձայնասկավառակում տեղ են գտել Սուրբ Ծննդյանը նվիրված խորալներ: Արվեստագետը ասաց, որ այս CD-ի միջոցով ցանկանում է հայաստանցի դասական երաժշտության սիրահարներին ծանոթացնել կանադահայ երգչուհի Սանդրա Աֆեյանին: Ի դեպ, CD-ն անցյալ տարի շնորհանդես է ունեցել նաեւ Լոնդոնում:




Նշենք, որ Արթուր Բոբիկյանը ավարտել է Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական մասնագիտական դպրոցը, այնուհետեւ ուսումը շարունակել Անգլիայի Gulford School of Music-ում, իսկ 2000-ից մշտական բնակություն հաստատել Միացյալ Թագավորությունում: Նա համագործակցել է Շարլ Ազնավուրի, Էլթոն Ջոնի, Վալերի Գերգիեւի, Ժան Կլոդ Վանդամի (պտահար է եւ ոչ թե հայտնի դերասանը) եւ այլ հայտնի անունների հետ:

«Անգլիայում իբրեւ երգեհոնահար հանդես եմ եկել Ջիվան Գասպարյանի հետ: Մինչ Անգլիայում հաստատվելը, 4 տարի համագործակցել եմ անկրկնելի երգչուհի Լուսինե Զաքարյանի հետ, 11 տարի հանդիսացել եմ Մայր աթոռ սուրբ Էջմիածնի երգեհոնահարը»,- տեղեկացրեց մեր զրուցակիցը: Հետաքրքրությանը, թե Անգլիայում ուսում ստանալուց հետո ինչո՞ւ չվերադարձավ հայրենիք, Ա. Բոբիկյանը պատասխանեց. «Հայաստանում ունեի հիանալի դասատուներ` կոմպոզիտորներ Արմեն Սմբատյան, Ստեփան Լուսիկյան, դաշնակահար Սերգեյ Բարսեղյան: 1997թ., բարոնուհի Քոքսի հրավերով Լորդերի պալատում ունեցած մենահամերգս փոխեց ճակատագիրս` ընդամենը բնակության վայրի առումով: Համերգային ծրագրերում միշտ ընդգրկում եմ շարականներից մինչեւ ժամանակակից հայ կոմպոզիտորների գործեր: Հանդես եմ գալիս նաեւ բարեգործական ծրագրերով, օրինակ` անցյալ տարի Անգլիայում գրանցված հայկական «Կանթեղ» բարեգործական միության հրավերով ունեցա մենահամերգ, որի հասույթը փոխանցվեց հաշմանդամ երեխաներին: Մի խոսքով, ուզում եմ ասել, որ այնտեղ էլ իմ ուժերիս չափով փորձում եմ օգտակար գործ անել Հայաստանի համար: Նպատակ ունեմ վարպետության դասեր անցկացնել Երեւանի կոնսերվատորիայում եւ հնարավորինս հաճախ համերգներով հանդես գալ Հայաստանում»:

Ա. Բոբիկյանը ասաց, որ ինքը 2011-ից Անգլիայի թագավորական պալատի կոմպոզիտորների միության անդամ է, որ մշտապես գտնվում է BBC-ի ու Radio France-ի ուշադրության կենտրոնում: Նա շեշտեց Երեւանի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կայացած իր մենահամերգը, հավելելով. «Որպես կոմպոզիտոր, Շվեյցարիայում 22 հեղինակի ներկայացրած երկերից իմ սիմֆոնիկ գործը համարվեց լավագույնը, որի թեման այսօր եվրոպական 87 TV-ներ օգտագործում են իրենց տարբեր ծրագրերում: 3400 տեղանոց Royal Festival Hall-ում կայացավ մենահամերգս` նվիրված ՀՀ անկախության 20-ամյակին, իսկ որպես դաշնակահար, արդեն նշեցի բարեգործական համերգիս մասին, որը տեղի ունեցավ Լոնդոնի հեղինակավոր Leighton House-ում»: Բոբիկյանը մասնակցություն է ունենում նաեւ թագավորական ընտանիքին պատկանող Wenstminster տաճարում անցկացվող հանդիսություններին:

Մեր զրուցակիցը խնդրեց «Առավոտի» միջոցով կոչ անել հայաստանյան TV-ներին` ավելացնել դասական երաժշտության ծրագրերը:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# «Ինձ չի հետաքրքրում, թե ով ում հետ է քնում»

## Ասում է «Ժառանգություն» կուսակցության պատգամավոր Ստեփան Սաֆարյանը

Սույն ամսին Բաքվում կայանալիք երկու կարեւոր իրադարձությունների պատճառով ադրբեջանական լրատվամիջոցներում, սոցիալական ցանցերում արդեն մի քանի օր է՝ թեժ քննարկումներ են ծավալվել. իրադարձություններից մեկը «Եվրատեսիլ» երգի մրցույթն է, մյուսը՝ դրան զուգահեռ անցկացվող չորս օր տեւող միասեռականների շքերթը:

Ըստ լրատվամիջոցներում շրջանառվող լուրերի՝ շքերթին մասնակցելու համար ամբողջ աշխարհից Բաքու են մեկնելու գեյեր, լեսբուհիներ, բիսեքսուալներ, տրանսգենդերներ: Ադրբեջանցիներն այժմ քննարկում են՝ ինչպես վարվել շքերթի մասնակիցների հետ:

Հայաստանցիները եւս ակտիվ քննարկում են այս թեման, եւ Facebook-ում անգամ քաղաքական գործիչներն են կարծիքներ արտահայտում:




«Առավոտը» ԱԺ պատգամավոր Ստեփան Սաֆարյանից փորձեց պարզել՝ եթե այդ երկու իրադարձություններն էլ Հայաստանում լինեին, ու միայն խորհրդարանի որոշմամբ թույլատրվեր շքերթի անցկացումը, նա «կո՞ղմ» կքվեարկեր, թե՞ «դեմ»: «Ես չեմ սիրում քննարկել (ավանդական, թե ոչ ստանդարտ սեռական կողմնորոշմամբ) մարդկանց սեռական կյանքը եւ սոփտակեղենը: Ինձ չի հետաքրքրում, թե ով ում հետ է քնում, ինչու եւ ինչպես: Ե՛ս չեմ նման հարցերի դատավորը: «Կողմ» լինելով սերնդի սեռական դաստիարակությանը, բայց դեմ լինելով սեռական կողմնորոշման բաց ու նպատակաուղղված քարոզչությանը՝ հավանաբար ձեռնպահ կքվեարկեի»: Պարոն Սաֆարյանը նաեւ ասաց, որ «դեմ» քվեարկելու հարցում տատանվում է, որովհետեւ խնդիրը, այդուհանդերձ, ազատ հավաքների իրավունքը արտոնելուն է վերաբերում, ինչի սահմանափակմանը ինքը դեմ է՝ անկախ նրանից, թե ով է ուզում այդ իրավունքից օգտվել: «Քվեարկությունը, ըստ ամենայնի, ոչ թե սեռական կողմնորոշման հանդեպ վերաբերմունքի մասին կլինի, այլ հավաքների ազատության իրավունքի արտոնման»:

Ժամանակակից գրող, բլոգեր Դորիանն էլ մեզ հետ զրույցում ասաց՝ կարծում է, որ «Եվրատեսիլից» հետո, կարճ ժամանակում, Բաքվի շքերթի բոլոր մասնակիցները կստանվեն իրենց «տոլերանտ» հայրենակիցների կողմից:

Նրա ձեւակերպմամբ՝ «Արեւմուտքին «սաղոնվելու» համար նախատեսվող այդ քայլը, սակայն, դրական հետեւանք էլ կունենա՝ դա հասարակությանը հստակ






ցույց կտա պետության դիրքորոշումն այդ հարցում: Ինքս, անկեղծ ասած, զզվանք եմ ապրում նման շքերթներից, դա հարցի լուծման ճանապարհ չեմ համարում ու կարծում եմ, որ միասեռականներն իրենք պիտի ամաչեն, երբ իրենց մասին այդ շքերթների մասնակիցներով են դատում: Միասեռականների հանդեպ խտրական վերաբերմունքի դեմ ես ու դուք պիտի պայքարենք, ոչ թե իրենց մսի կտորից թանկ չգնահատող, բմբուլներով զարդարված ու փողոց շպրտված խեղկատակները: Եթե Հայաստանում նման բան լիներ, ես էլ «դեմ» «կքվեարկեի» ու, կարծում եմ, դեմ կքվեարկեր հարցով մտահոգ յուրաքանչյուր պատգամավոր»:

«Հանրային տեղեկատվություն եւ գիտելիքի կարիք» հ/կ-ի նախագահ Մամիկոն Հովսեփյանն էլ «Առավոտին» հայտնեց, որ նախ՝ ինֆորմացիան ամեն տեղ սխալ է գնացել, շքերթ չի լինելու, պարզապես «Եվրատեսիլը» համարվում է գեյ փրայդմիջոցառման մի մաս, հետո էլ հավելեց. «Ամեն դեպքում ես չեմ կարծում, որ Հայաստանում հնարավոր է նման միջոցառում իրականացնել. դեռեւս մարդիկ՝ քաղաքացիները եւ իշխանությունը, սխալ պատկերացում ունեն շքերթի վերաբերյալ, քանի որ հաճախ մեդիան գեյ-շքերթները լուսաբանում է որպես էրոտիկ կամ պոռնոգրաֆիկ միջոցառումներ՝ ցուցադրելով վուլգար նկարներ»: Մ. Հովսեփյանի մեկնաբանմամբ՝ իրականում գեյ-շքերթը բողոքի ակցիայի մի ձեւ է, որտեղ ԼԳԲՏ (լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) համայնքը պահանջում է հավասարություն եւ մարդու իրավունքների պաշտպանություն: «Այնուամենայնիվ, այս ամենն ընկալելու համար մենք դեռ շատ հեռու ենք, քանի որ հասարակությունը չունի տեղեկատվություն սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության մասին, կամ էլ ունեցած ինֆորմացիան անհիմն է եւ թյուր»,- եզրափակեց Մամիկոնը:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ

# Ապաստարանները ու հակաճառագայթային թաքստոցները անպիտա՞ն են



Շիրակի մարզի ապաստարանները եւ հակաճառագայթային թաքստոցները չեն համապատասխանում այսօրվա նորմերին: Մարզի 32 ապաստարաններից եւ հակաճառագայթային թաքստոցներից վերանորոգման է ենթակա 12-ը, մասնակի վերանորոգման՝ 9-ը, դուրսգրման՝ 11-ը:

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարար վարչության տվյալներով, անցած տարի Շիրակում գրանցվել է 398 արտակարգ դեպք՝ 2010 թվականի 438-ի համեմատությամբ: Այս դեպքերի արդյունքում զոհվել է 29 մարդ (2010 թվականին՝ 34), մարմնական վնասվածքներ ստացել կամ վիրավորվել՝ 263 մարդ (2010 թվականին՝ 302):

Գրանցված 398 դեպքից 335-ը տեխնածին են՝ ընդհանուր դեպքերի 84,2%-ը, որոնց հետեւանքով զոհվել է 18 մարդ, զոհերի 62%-ը: Տեխնածին դեպքերի կեսը՝ 170-ը, հրդեհներ են:

Ըստ նույն աղբյուրի, 2010 թվականի համեմատությամբ, 2011 թվականին՝ ամիսների կտրվածքով, մարտ-մայիս՝ հրդեհները հիմնականում նվազում էին: Սակայն հուլիս ամսից սկսած՝ չոր եւ շոգ եղանակի պատճառով գրանցվել է խոտածածկ տարածքների հրդեհների կտրուկ աճ՝ 88 հրդեհ:

2011 թվականին Շիրակում արձանագրվել է ջրահեղձման 5 դեպք (2010թ.՝ 4). մեկական՝ Ջրաշեն եւ Արեգնադեմ գյուղերի լճակներում, իսկ 3 դեպք՝ Վահրամաբերդ գյուղի ջրային տարածքում: 2010-ի չորս դեպքից երկուսը էլի Վահրամաբերդ գյուղի ջրային տարածքում է եղել, ուստի Շիրակի փրկարարները որոշել են 2012թ.-ին ուժեղացնել հսկողությունը հատկապես Վահրամաբերդ գյուղի ջրային տարածքում:

Արտակարգ իրավիճակներին շիրակցիներին պատրաստելու եւ իրազեկվածությունը բարձրացնելու համար Շիրակի մարզային փրկարար վարչությունը անցկացրել է շտաբային ուսումնավարժություններ, օբյեկտային վարժանքներ, հատուկ-տակտիկական վարժանքներ՝ 30 գյուղում եւ կազմակերպել ավելի քան 100 դասախոսություն ու դասընթաց՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ձնաբքի դեպքում», «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը երկրաշարժի դեպքում» եւ այլ թեմաներով:



### «Արզնի 2-Երեւան» ջրատարը վերանորոգվում է

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, «Արզնի 2-Երեւան» ջրատարի շինարարական աշխատանքների հետ կապված, հունվարի 16-ին, ժամը 10.00-ից մինչեւ հունվարի 17-ը, ժամը 10.00-ն կդադարեցվի հետեւյալ տարածքների ջրամատակարարումը.

1. Արաբկիր վարչական շրջանում՝ Սեւքարեցի Սաքոյի, Արղության, Գրիբոյեդովի, Ղափանցյան, Մալխասյանց, Ն. Զարյան, Գ. Արծրունու, Հ. Քոչարի, Վ. Վաղարշյան, Մանուշյան, Հ. Էմինի, Թավրիզյան, Ռաֆֆու, Կովկասյան, Վ. Փափազյան, Ռիգայի, Գյուլբենկյան, Կոմիտասի, Ա. Խաչատրյան, Բակունցի փողոցների:

2. Շենգավիթ վարչական շրջանում՝ Բագրատունյաց 4, 6, 7, 8, 10, 11/1, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 24, 26, 27, 28, 29, 30, 31, 35, 36, 37, 38, 40, Բագրատունյաց 2-րդ նրբ. 3, 7, 9, 11, 13, 15, 17, Ս.Տարոնցի 3, 5, 7, Ս.Տարոնցի նրբանցքի, Գ. Նժդեհի 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, Եղ. Թադեւոսյան 13, 13/1, 15, 15/1, 17, 17/1, 19, Արտաշիսյան 40, 42, 44/3, 44/4, 44/5, 44/6, 45/21, 46, 47/1, 48, 49/19, 51/16, 51/17, 53, 55, 57/12, Չեխովի 24, 25, 28, 32, 34 շենքերի 3-ից բարձր հարկերի: Իսկ Ղարիբջանյան, Արագածի, Կողբի փողոցների առանձնատներում կնկատվի ջրամատակարարման ցածր ճնշում:

Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը՝ պատճառված անհանգստության եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար: